

# ՄԱՍՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

39ԴԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 33 (1933) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 14, 2019  
VOLUME 39, NO. 33 (1933) SATURDAY SEPTEMBER 14, 2019



Պաշտոնաթերթ՝  
Մ. Գ. Հնչակեան Կուսակցության  
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly  
1060 N. Allen Ave. Suite 101  
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Թրամփ-Փաշինեան Զանդիպուժի Մասին Խօսիլը Անհմաստ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինեան յառաջիկայ շաբաթ պիտի այցելէ Միացեալ Նահանգներ, Նիւ Եորքի մէջ մասնակցելու համար ՄԱԿ-ի ընդհանուր ժողովին: Այս առթիւ Գայաստանի մամուլը եւ քաղաքական մեկնաբանները դարձեալ սկսած են քննարկել Միացեալ Նահանգներու նախագահի հետ հանդիպումի հաւանականութիւնը: Անցեալ շաբթուայ ընթացքին արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեանի Երեւանի մէջ կայացած մամուլային ասուլիսի ընթացքին լրագրողները հարց տուին Թրամփ-Փաշինեան հանդիպումի մասին, որուն ի պատասխան նախարարը յայտնեց, թէ նման հանդիպումի մը ուղղութեամբ կողմերու միջեւ քննարկումներ տեղի կ'ունենան, սակայն տակաւին յստակ թուական չկայ:

Գայաստանի մէջ ոմանք Թրամփ-Փաշինեան հանդիպումի հարցին կը մօտենան այն տեսանկիւնէն, թէ այդ հանդիպումի չկայանալը ուղղուած է Փաշինեանի անձին դէմ, եւ թէ Ամերիկան դժգոհ է Գայաստանի արտաքին քաղաքական ուղղութեամբ ու տարածաշրջանային յարաբերութիւններու հարցով:

Նախ պէտք է ըսել, որ ՄԱԿ-ի ժողովներու ընթացքին, նման հանդիպում ակնկալելը ճիշդ մօտեցում չէ: Նոյն օրերուն Նիւ Եորք կ'այցելեն աշխարհի աւելի քան հարիւր երկիրներու ղեկավարներ՝ ելոյթ ունենալու համար նստաշրջանին առջեւ: Ամերիկայի նախագահները կը բաւարարուին հաւաքական ընդունելութիւն մը կազմակերպելով, մասնակից երկիրներու ղեկավարներուն ի պատիւ: Տեղի կ'ունենան նաեւ կողմնակի կարծատեւ հանդիպումներ՝ սահմանափակ թիւով երկիրներու ղեկավարներուն եւ ԱՄՆ նախագահին միջեւ, որոնց հետ անմիջական հարցեր կան քննարկելիք:

Ասկէ դուրս բոլոր նախագահներուն ու վարչապետները կ'արժանանան նոյն վերաբերմունքին ու ատոր մէջ պէտք չէ տեսնել քաղաքական

Շար.ը էջ 17

### Փաշինեան Խնդրեց Բանալ Անուլսարի Զանք Տանող Ծանապարիը. Բնապահպանները Կը Մերժեն

«Առնուազն այս պահի դրութեամբ մենք չունենք Ամուլսարի հանքի շահագործումն արգելելու որեւէ իրաւական հիմնաւորում», - Մեպտեմբեր 9-ին Ֆէյսպուքեան միացմամբ յայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ խնդրեց ջերմուկցիներէն բանալ հանք տանող ճանապարհը:

«Խնդրում եմ ապաշրջափակել Ամուլսարի հանք տանող ճանապարհները եւ դրա համար բերում եմ վերջին փաստարկը: Որովհետեւ դուք այդ ճանապարհները փակելու անհրաժեշտութիւն չունէք, որովհետեւ դուք ունէք կառավարութիւն, որը, եթէ տեսնի, որ էդ ճանապարհները փակելու անհրաժեշտութիւն կայ, ինքը իր լծակներով, օրէնքով իրեն վերապահուած լիազօրութիւններով կը գնայ ճանապարհն էլ կը փակի, մնացած ամէն ինչն էլ կը փակի», - յայտարարեց վարչապետը:

Փաշինեան շեշտեց, որ հաշուի կ'առնուին հանրային անհանգստութիւնները, բայց նաեւ՝ տնտեսագէտներու անհանգստութիւնները:



Անուլսարի հանք տանող ճանապարիը. փակող բնապահպանները

ըր. - «Մենք չենք կարող հաշուի չնստել նաեւ տնտեսական հանրութեան մտահոգութիւնների հետ, թէ՛ եթէ մենք այս հարցի վերաբերեալ ճիշդ մօտեցում չցուցաբերենք, ինչ հետեւանքներ դա կարող է ունենալ Հայաստանի ընդհանուր տնտեսութեան համար»:

Վերջին օրերուն վարչապետ Փաշինեան հանդիպումներ ունեցած էր «Լիտիան»-ի ներկայացուցիչներու հետ, ստացած հաւաստիացումներ, թէ հանքի շահագործումը անվտանգ է 100 տոկոսով:

Շար.ը էջ 7

### Թաւշեայ Յեղափոխութեան Նուիրուած Ֆիլմը Ցուցադրուեցաւ Թորոնթոյի Փառատօնին



Սերժ Թանքեան, Աննա Յակոբեան եւ Կարէն Յովհաննիսեան «Ես Մենակ Չեմ» ֆիլմի ցուցադրութեան երեկոյի ընթացքին

Հայաստանի թաւշեայ յեղափոխութեան մասին պատմող «Ես Մենակ Չեմ» վաւերագրական ֆիլմը

մի առաջին ցուցադրութիւնը տեղի ունեցաւ Մեպտեմբեր 7-ին, Թորոնթոյի միջազգային ֆիլմերու

փառատօնի ընթացքին:

Կարէն Յովհաննիսեանի պատրաստած ֆիլմի ցուցադրութեան ներկայ էին Հայաստանի առաջին տիկին՝ Աննա Յակոբեան, Գանատայի մէջ Հայաստանի դեսպան՝ Անահիտ Յարութիւնեան, ֆիլմի համարտորդիչ, յայտնի երգիչ Սերժ Թանքեան եւ Գանատահայ համայնքի ներկայացուցիչներ:

Կարէն Յովհաննիսեանի ֆիլմը կը պատմէ թաւշեայ յեղափոխութեան ամբողջ ընթացքը, երբ Նիկոլ Փաշինեան իր խումբ մը համախոհներով սկսաւ իր քայլաշար կոմերիքն դէպի Երեւան, որու աւարտին Սերժ Սարգսեան ժողովրդային ճնշումի տակ ստիպուած եղաւ ներկայացնելու իր հրաժարականը:

Ֆիլմին ընթացքին կը խօսին յեղափոխութեան տարբեր կողմերը ներկայացնող գործիչներ, որոնց շարքին վարչապետ Նիկոլ Փաշինեան ու նաեւ անակնկալօրէն՝ նախկին նախագահ Սերժ Սարգսեան:



**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ ԱՅՍ ՏԱՐԻ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՅ, ՈՐՊԷՍԻ ԲՈԼՈՐՍ ՄԱՍՆԱԿՑԻՆՔ ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՔԻՆ**

**SUNDAY SEPTEMBER 22, 2019 AT 2:00 PM**

**ԳՐԱՆՏ ՓԱՐՔ ԼՈՍ ԱՆՉԵԼԷՍԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ  
GRAND PARK AT LOS ANGELES CITY HALL  
200 N. SPRING STREET LOS ANGELES, CA 90012**



# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Հայաստան-իրան Երկաթուղու Նոր Շուճ. Թեհրանի Ազդակը

### ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Իրանն արդիականացնում է Հայաստան-իրան երկաթուղու հարցը, գրել էր իրանագետ վարդան Ոսկանեանը, արձանագրելով, որ թեմային օրերս անդրադարձել է իրանցի հեղինակավոր փորձագետներին մեկը՝ արտայայտելով Հայաստան-իրան-Չինաստան աշխատանքային խումբ ստեղծելու անհրաժեշտության մասին: Իրանագետը նաև նկատել է, որ իրանի նախագահ Հասան Ռոհանին օրերս յայտարարել էր ենթակառուցողական քննարկումները կատարելագործման եւ ընդլայնման կարեւորությունը մասին, ինչը վարդան Ոսկանեանի գնահատմամբ դարձեալ խօսում է հայ-իրանական երկաթուղու ծրագիրն արդիականացնելու իրանի մտադրությունների մասին:

Հայաստան-իրան երկաթուղու շինարարությունը սկսելու մասին Սերժ Սարգսեանը յայտարարեց 2008 թվականի Հոկտեմբերի 2-ին, իր մի քանի մեզանախագծերի շարքում: Տասը նախագահական տարիների ընթացքում այդ նախագծերից որեւէ մեկը, այդ թվում երկաթուղին, չմտան գործնական իրագործման փուլ:

Իրան-Հայաստան երկաթուղու վերաբերեալ տարիներ անց կնքուեց կասկածելի մի համաձայնագիր՝ ՌԱՄԱ ՖՁԷ մի կազմակերպություն հետ, որը տեղակայուած էր Դուբայում: Ըստ այդ պայմանագրի, կազմակերպությունը պէտք է աշխատեր ծրագրի իրականացման ուղղությամբ: Սակայն, հինգ տարի անց՝ 2017 թվականին, Կարէն Կարապետեանի կառավարությունը չեղարկեց այդ պայմանագիրը, յայ-

տարարելով նաև, որ այդ ընկերությունները չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Միաժամանակ, Կարէն Կարապետեանի կառավարությունը շրջանում լուծարուեց կապի ու տրանսպորտի նախարարության կառուցը, որը դէ ֆակտո զբաղում էր Հայաստան-իրան երկաթուղու հարցով:

Այդ տարիներին ընթացքում տեղի ունեցած հնչեղ իրողություններից մէկն էլ Հայաստանի երկաթուղին 2008 թվականից երեսուներեք տարի ճանապարհորդության կառավարման ստացած Ռուսական երկաթուղիներ ընկերության այդ տարիների ղեկավար Յակոբյանի յայտարարությունն էր, որ իրենց համար հայ-իրանական երկաթուղին ոչ մի տեղ չտանող պատ է:

Միջոց է Ռուսաստանը մտածել այդպէս, դժուար է ասել, քանի որ Սերժ Սարգսեանը Հայաստան-իրան երկաթուղու մասին յայտարարել էր «Ֆուտուրային դիւանագիտություն» գուգահեռ, որի մեկնարկն էլ տուեց էր Յուսիպին նախագահի կարգավիճակում Մոսկու կատարած առաջին այցի ընթացքում: Եթէ դրան աւելացնենք 2008-ին հայկական երկաթուղու հաւատարմագրային կառավարման ստանձնումը, ապա կարող է հիմք լինել եզրակացնելու, որ Ռուսաստանն ըստ երեւոյթին ակնկալում էր «Ֆուտուրային դիւանագիտության» միջոցով հասնել մի իրավիճակի, երբ Թուրքիան եւ յետոյ Ատրպէյճանը կապարդէյափակէին ռեգիոնը ենթակառուցուածքները, կը բացուէր հայ-թուրքական սահմանը, կը գործէր Կարս-Գիւմրի երկաթուղին եւ այդ պարագայում Ռուսական երկաթուղիները

Հայաստանում հաւատարմագրային կառավարման իրաւունքի պայմաններում փաստացի կը տնօրինէին «խաչմերուկը»:

Այդ ամէնն իհարկէ պէտք է տեղի ունենար Արցախի հարցում Հայաստանի գիշման պայմաններում, ինչն ակնյայտ էր թէ ռուսաստանցի, թէ թուրք եւ ատրպէյճանցի դիւանագետների յայտարարություններից: Սերժ Սարգսեանը մի կողմից մտաւ այդ խաղի մէջ՝ 2008-ի Մարտի 1-ից յետոյ նա չունէր չմտնելու հարաւորություն, միւս կողմից կարողացաւ Եւրասոցացման գործընթացի մէջ ներգրաւուելով ստանալ Հայաստանի եւ Արցախի համար վտանգաւոր «ֆուտուրային դիւանագիտություն» չեղաքայնելու հարցում Արեւմուտքի աջակցությունը: Այդ ամէնով հանդերձ, Հայաստանի ապաշրջափակումը տեղի չունեցաւ, ինչն էլ թերեւս ապարդիականացրեց Հայաստան-իրան երկաթուղու գաղափարը: Առաւել եւս, որ 2013-ին տեղի ունեցաւ Սեպտեմբերի 3-ը, լրջօրէն կասկածի տակ դնելով Հայաստանի ինքնիշխան քաղաքականություն կարողությունը:

Ի վերջոյ, միլիարդաւոր տոլարի ներդրում պահանջող նախագիծը պէտք է ենթադրի շարունակություն Հայաստանից անդին, եւ առաջին հերթին իհարկէ այդ նախագիծն ակնկալու էր Հայաստանի ինքնիշխան կարողությունը: Եթէ այդ ամէնը չկայ, ապա հազիւ թէ ներդրումները լինեն արդարացուած որեւէ մէկի համար՝ Հայաստանից բացի: Այդ իսկ պատճառով իրանը յայտարարել է մի քանի անգամ, որ պատրաստ է իր տա-

րած քում անհրաժեշտ ներդրումը կատարել, եթէ Հայաստանը լուծի հայկական տարածքով ներդրումների հարցը: Մինչդեռ այստեղ է ամենաթանկ հատուածը, որ կ'արժենայ, ըստ նախնական գնահատման, առնուազն 3 միլիարդ տոլար:

Ի՞նչ է փոխուել այժմ, եթէ իրանի իրապէս մտադիր է արդիականացնել հարցը: Եւ ու՞ր է գնալու երկաթուղին Հայաստանից յետոյ:

Իրանից այս ազդակը նշմարուած է Հայաստանում Հոկտեմբերի 1-ին սպասուող ԵՏՄ վեհաժողովին ընդառաջ, որի շրջանակում սպասուած է ՌԴ նախագահի եւ իրանի նախագահի այցը: Նրան հրաւիրել է Նիկոլ Փաշինեանը: Ի դէպ, այդ իմաստով խորհրդանշական կը լինի, որ հարցը քննարկուի Հոկտեմբերի 1-2-ին, նկատի ունենալով հենց այն, որ նախագիծն մասին Սերժ Սարգսեանն էլ հուշակէլ էր 11 տարի առաջ Հոկտեմբերի 2-ին:

Նախագահները Երեւանում մասնակցելու են պիզնես համաժողովի: Արդեօք իրանը Հայաստանում Ռուսաստանի մասնակցությունը կը շօշափի երկաթուղու հարցը: Այդ դէպքում սակայն առկայ է վրաստանի հարցը: Հետաքրքիր է, որ օրերս այստեղ տեղի ունեցաւ վարչապետի անսպասելի փոփոխություն, եւ այդ պաշտօնին նշանակուեց ներքին գործերի նախարար Գէորգի Գախարիան, որին մի քանի ամիս առաջ մեղադրուած էին վրաստանում հակառուսական ցոյցերը ցրելիս ուժի անհամաչափ կիրառման համար:

«ԼՐԱԳԻՐ»

### Նիւտոնի Երրորդ Օրէնքը

#### ԱՐԱՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

2001-ի Սեպտեմբերի 25-ին «Առաջաստ» («Պոպլափոկ») արձարանում տեղի ունեցած միջադէպը, երբ 2-րդ նախագահի թիկնապահ Աղամալ Յարուժիկեանը զուգարանում ձեռնարկ սպանեց վրաստանի քաղաքացի, դաշնակցական Պօղոս Պողոսեանին, մի քանի օր առաջ դարձեալ քննարկման առարկայ դարձաւ այն բանից յետոյ, երբ ՍԴ-ում քննուած էր Ռոբերտ Քոչարեանի հայցը: Պատահաբար, թէ յատուկ նպատակով ՍԴ-ի մօտ էր յայտնուել այդ յանցագործությունների վկաններից մէկը՝ բրիտանացի ՍԹԻԼԸՆ Նիւտոնը, որը յիշեց, թէ ինչ էր տեղի ունեցել 18 տարի առաջ, լրատուամիջոցներն էլ յիշեցին, որ Աղամալ Յարուժիկեանը խորհրդանշական եւ պայմանական պատիժ ստացաւ՝ դէպքը ներկայացուեց որպէս «անգործ սպանություն»:

Այդ ժամանակ իշխանությունները եւ, մասնաւորապէս, Բաղրամեան-26-ի հրահանգները կատարող դատաւոր Մնացական Մարտիրոսեանը, հերթական անգամ թքեցին ՀՀ քաղաքացիների երեսին: Կասկածում եմ, որ այսօր գործի նոր քննությունը որեւէ արդիւնք կը տայ: Հաւանաբար, դժուար կը լինի ապացուցել, որ Քոչարեանն իր թիկնապահներին հրահանգել է՝ «սատկացրէ՛ք սրան»: Ենթադրում եմ, որ նման հրահանգ չի էլ եղել. լսելով, որ Պօղոս Պողոսեանը նրան «սխալ է բարե-

ւել», Քոչարեանը, հաւանաբար, պարզապէս լարել է իր վզի մկանները, եւ դա թիկնապահների համար միանգամայն բաւարար էր:

Բայց բարոյական, քաղաքական առումով այդ պատմությունն, ինչ խօսք, յատկանշական է: Այն վկայում է նախ՝ այն ժամանակուայ առաջին դէմքի բնաւորություն մասին, որն, իմ կարծիքով, շողախոսած է հիւանդագին ինքնահաստատման ինչ-որ ֆրէյդիստական բարդութիւնների վրայ: Բայց ինդիրն, իհարկէ, միայն անձնական չէ. պատմությունը յատկանշական է նաև իշխանությունների ֆանտաստիկ լիտիությունը, անպատեհ լիտիությունը եւ ազրեսիւթեամբ, որոնք այդ տարիներին հասել էին իրենց գագաթնակէտին: Կրկնում եմ, վստահ չեմ, որ օրերս Սահմանադրական դատա-

րանի մօտ յայտնուած ՍԹԻԼԸՆ Նիւտոնի հարցազրոյցների հիման վրայ հարաւոր է վերաբացել 18 տարի առաջ տեղի ունեցած սպանությունների գործը: Բայց բրիտանացին ակամայ յիշեցրել է իր հանձարեղ ազգանուանակից ֆիզիկոսի երրորդ օրէնքը՝ «ազդումը միշտ ունի հաւասար եւ հակադիր հակազդում, այլ կերպ՝ երկու մարմինների փոխազդեցությունները միմեանց հաւասար են եւ հակառակ ուղղուած»:

2001-ի «Պոպլափոկի» դէպքը, դրան հետեւած դատավարությունը եւ Աղամալ Յարուժիկեանի գործով դատավճիռը (ինչպէս նաև բազմաթիւ այլ դէպքեր եւ դատավճիռներ) վիրաւորանք էր, անարգանք էր հասարակություն հասցէին:

«ԱՌԱՒՕՏ»

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՎ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸՎԱՍԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՎԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԻՍԻՉԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅՆԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Հայկ Մարուքեանի Հրաժարականի Լուրերը Չեն Համապատասխաներ Իրականութեան

Երեւանի քաղաքապետ Հայկ Մարուքեանը յայտարարած է, որ իր պաշտօնավարման դադարեցման վերաբերեալ համացանցի մէջ տարածուած տեղեկութիւնները չեն համապատասխաներ իրականութեան:

«Արմէնփրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին Մարուքեանը ըսած է լրագրողներու հետ ճեպագրուած ժամանակ:

«Մենք դեռ նոր ենք սկսել աշխատել, դեռ չի անցել իմ պաշտօնավարման 1 տարին: Այս ընթացքում արդէն իսկ 6500 քմ տարածք մանկապարտէզներից յետ ենք բերել համայնքին, 2 միլիառ դրամով մեծացրել ենք Երեւանի քաղաքապետարանի պիլատճէն, վերանայում ենք բոլոր անօրինական սեփականաշնորհումները: Մենք մեծ ծրագրեր ունենք, ինչի՞ պէտք է հրաժարականներ կայացնենք», - նշած է:



Երեւանի քաղաքապետ Հայկ Մարուքեան

է Երեւանի քաղաքապետը:

Անդրադառնալով նաեւ արեւմտահայերէն վերաբերեալ հնչող մեղադրանքներուն՝ Մարուքեանը նշած է, որ այն արդէն լուծուած է:

## Արման Բաբաջանեանը Պիտի Չիրաժարի Պատգամաւորական Մանտաքն

Ազգային ժողովի պատգամաւոր Արման Բաբաջանեան պիտի չհրաժարի պատգամաւորական մանտաքէն: Ան քանի մը օր առաջ յայտարարած էր, որ դուրս պիտի գայ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութենէն, իսկ խմբակցութեան ղեկավար էտմոն Մարուքեան ի պատասխան ըսած էր, թէ կ'ակնկալեն, որ Արման Բաբաջանեանը վերադարձնէ մանտաքը, քանի որ այն «Լուսաւոր Հայաստանի» ծրագրին տրուած ձայներու շնորհիւ ստացած է:



Ազգային ժողովի պատգամաւոր Արման Բաբաջանեան

անհամաձայնութիւններ: Մեծ հաշուով խորը անհամարժէքութիւն կայ ընդդիմադիր դաշտի գործողութիւններում այն մարտահրաւերների առկայութեան պայմաններում, որում Հայաստանն այսօր յայտնուել է: Այդտեղ «Լուսաւոր Հայաստան» արդէն մեծ աշխատանք ունի կատարելու արդէն առանց ինձ», - նշած է Բաբաջանեանը:

Ան անդրադարձած է իր որոշման պատճառներուն: «Ես չեմ տեսել, որ «Լուսաւոր Հայաստանը» բարձրացնի հարցեր, որոնք այսօր պատասխանում են Հայաստանի առաջ կանգնած մարտահրաւերներին»:

## 720 Միլիոն Դրամ՝ Մարտ 1-ի Զոհերու Հարազատներուն Եւ Տուժածներուն Աջակցութիւն Տրամադրելու Համար

Հայաստանի կառավարութիւնը որոշում կայացուցած է պահուստային ֆոնտէն Արդարադատութեան նախարարութեան 720 միլիոն դրամ յատկացնել 2008 թուականի Մարտ 1-ի արիւնալի իրադարձութիւններէն տուժած անձանց աջակցութիւն տրամադրելու համար:

Արդարադատութեան նախարար Ռուստամ Բաղասեանը ըսած է, որ գումարի չափը հաշուարկած են Յատուկ քննչական ծառայութեան տրամադրած տեղեկութիւններու հիման վրայ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը ըսած է, թէ եւս մէկ անգամ կը ցանկալ չեշտել՝ սա ոչ թէ փոխատուցում է զոհուածներու հարազատներուն եւ տուժածներուն, այլ՝ աջակցութիւն:

Յիշեցնենք՝ մարտիմէկեան իրադարձութիւններու ընթացքին զոհուած քաղաքացիի իրաւապաշտպան պետութիւնը 30 միլիոն դրամ պիտի տրամադրէ, առողջութեան ծանր վնաս հասցուած անձին՝ 15 միլիոն, առողջութեան միջին ծանրութեան վնաս հասցուած անձին ալ՝ 5 միլիոն դրամ:

## Էտմոն Մարուքեան Հաստատած է Փաշինեանի Նշած Գաղտնի Ձեկոյցի Գոյութիւնը

«Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար էտմոն Մարուքեան հաստատած է, որ վարչապետ Նիկոլ Փաշինեանի նշած գաղտնի զեկոյցը գոյութիւն ունի, ինքը ծանօթացած է անոր: Այս մասին պատգամաւորը յայտարարած է ֆէյսպուքեան ուղիղ եթերի ժամանակ:



«Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար Էտմոն Մարուքեան

«Նախկին թալանչի մանկապարտէզներ սեփականաշնորհող իշխանութիւնների տարբեր տրամաչափի գործիչներ նշում էին, որ գաղտնի զեկոյցը գոյութիւն չունի: Զեկոյցին, որ յոյժ գաղտնի է, ես ծանօթացել եմ եւ պնդում եմ, որ այդ զեկոյցը գոյութիւն ունի: Իսկ թէ ինչի՞ մասին է, ի՞նչ պէտք է արուի, ըստ էութեան, մեր մասին է գրուած, թէ ինչ վիճակում է գտնուում Հայաստանի Հանրապետութիւնը եւ ինչ անելիքներ կան: Մենք այդ անելիքներն անելու ենք եւ Հայաստանի Հանրապետութիւնը տանելու ենք առաջ, որեւէ բան մեզ ուղղակի չի կասեցնելու», - ըսած է ան:

Պատգամաւորը նաեւ անդրադարձած է մամուլի հրապարակումներէն մէկուն, ըստ որում՝ Ռուբիկ Յակոբեանի միջոցով կ'աշխատին «Լուսաւոր Հայաստան»-ի հետ, որպէսզի տապալեն Նիկոլ Փաշինեանը: Էտմոն Մարուքեանը նշած է, որ այդ մէկը լիտի սուտ է:

«Կայ սուտ, նորմալ սուտ, ապաստեղծաւորութիւն եւ լիտի սուտ: Դա լիտի սուտ է, մեզ համար անցեալի էջն ամբողջութեամբ փակուած էջ է, եւ անցեալի էջը փակած լինելով՝ չենք պատկերցնում մեզ նման տիրոջներում, ինչի մասին խօսում է,

ներկայացուած: Թող այդ մարդիկ հանգիստ նստեն իրենց տեղները եւ որեւէ կերպ չփորձեն մեզ վրայ ցեխ շարտել: Մանկապարտէզ սեփականաշնորհողները եւ նախկին ռեժիմի ներկայացուցիչները որեւէ կերպ որեւէ առիթ չեն կարող ունենալ», - ըսած է Մարուքեանը:

ԼՀԿ խմբակցութեան ղեկավարը նշած է, որ Հայաստանի մէջ ընտրութիւններու միջոցով ձեւաւորուած է օրինական խորհրդարան եւ կառավարութիւն: «Տուեալ պարագայում Նիկոլ Փաշինեանը կը լինի վարչապետ մինչեւ յաջորդ ընտրութիւնները, մինչեւ յաջորդ խորհրդարանական ընտրութիւնները՝ 2023 թ.-ը, հետեւաբար, իրար վերեւ-ներքեւ մի թուէք, ՀՀ-ն ժողովրդավարական երկիր է եւ ամէն բան ընտրութիւնների միջոցով է որոշուում», - ըսած է ան:

## Սահմանադրական Դատարանի Որոշումը Չի Կրնար Գործադրուիլ Տիգրան Եգորեան

Փաստաբան Տիգրան Եգորեանի պնդմամբ՝ Մարտ 1-ի գործով մեղադրեալ Ռուպերթ Քոչարեանի դիմումի վերաբերեալ Սահմանադրական դատարանի (ՍԴ) որոշումը անօրինական է: Փաստաբանը հիմնաւորած է՝ յղում ընելով Սահմանադրական դատարանի դեռ 2010 թուականին ընդունած 918 որոշման: Ըստ այս որոշման, եթէ դատարանի անաչառութեան եւ անկողմնակալութեան վերաբերեալ կայ կասկած եւ այդ պայմաններու մէջ կը կայացուի դատական որոշում, ապա այդ որոշումը չի համապատասխաներ Սահմանադրութեան սահմանած սկզբունքներուն եւ չի կրնար գործադրուիլ:



Փաստաբան Տիգրան Եգորեան

«Միայն այս հիմքը բաւարար է, որպէսզի չենց նոյն Սահմանադրական դատարանի կողմից ընդունուած որոշումը հիմք ընդունելով չկատարուի այս որոշումը», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ նշած է Եգորեանը:

Ըստ Տիգրան Եգորեանի, Քոչարեանի դիմումը քննած ՍԴ անդամները արդէն իսկ ունին կանխակալ վերաբերմունք, քանի որ անցեալին Մարտ 1-ի գործին առնչուող տարբեր որոշումներու վերաբերեալ նախկին իշխանութիւններու դիրքորոշումներուն կողմ քուէարկած են: Եգորեանը դեռ Յուլիսին դիմում ներկայացուցած էր Սահմանադրական դատարան՝ հիմնաւորելով ՍԴ կազմէն 7 անդամի մասնակցութիւնը Մարտ 1-ին

առնչուող որոշումներուն: Քոչարեանի դիմումէն առաջ ալ Սահմանադրական դատարանի դատաւոր Վահէ Գրիգորեանը միջնորդութիւն ներկայացուցած էր, որ ՍԴ նախագահ Հրայր Թովմասեանը եւ եւս երկու անդամ՝ Արեւիկ Պետրոսեանն ու Հրանդ Նազարեանը չեն կրնար անաչառ ու անկողմնակալ քննել այս գործը: Վահէ Գրիգորեանը փաստերով հիմնաւորած էր անոնց մասնակցութիւնը Մարտ 1-ին առնչուող գործերուն: Սակայն ՍԴ-ն առանց այս միջնորդութիւնը քննելու անցած է Ռուպերթ Քոչարեանի դիմումի քննութեան՝ նոյն կազմով: Վահէ Գրիգորեանի մասնակցութեան անհարկութեան վերաբերեալ աւելի վաղ որոշում կայացուած է, քանի որ անցեալին ան եղած է Մարտ 1-ի գործերու իրաւապաշտպաններու ներկայացուցիչը:



# ԼՈՒՐԵՐ

## Ձոհրապ Մնացականեան Յայտարարած է որ Փաշինեան-Թրամբ Յանդիպումը Պիտի Կայանայ



Ձոհրապ Մնացականեան ելույթ կ'ունենայ Երեւանի մէջ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի ամերիկեան այցէն առաջ արտաքին գործոց նախարար Ջոն Դոնալդ Մնացականեանը յայտարարած է, որ վարչապետի ու Միացեալ Նահանգներու նախագահի միջեւ հանդիպում պիտի ըլլայ, այդ հարցը օրակարգի վրայ է, սակայն հանդիպման ժամկէտի մասին դժուարացած է յստակ տեղեկութիւն հաղորդել:

Նշենք, որ Նիկոլ Փաշինեանը Միացեալ Նահանգներ պիտի մեկնի Սեպտեմբերի վերջին տասնօրեակին՝ մասնակցելու ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայի համաժողովի 74-րդ նստաշրջանի աշխատանքներուն, որուն բացման հանդէս պիտի գայ ելոյթով: Նախատեսուած են շարք մը երկկողմ հանդիպումներ, ինչպէս նաեւ հանդիպումներ ԱՄՆ հայ համայնքի ներկայացուցիչներու հետ:

«Ինչ վերաբերում է վարչապետի եւ Միացեալ Նահանգներու նախագահի հետ հանդիպմանը՝ կը լինի: Երբ կը լինի՝ շատ լաւ է, աշխատում ենք եւ սա մեզ համար օրակարգային հարց է, բայց ուղղակի կեդրոնանալ միայն, որ եթէ չկայ, ուրեմն այդպէս է՝ ես այդ մօտեցումը չեմ կիրառում, որովհետեւ որեւէ պակաս՝ բարձր մակարդակով չի կարողանալու հարցը»:

## Հիւսիս-Յարաւ Գանապարհի Գործով Սերժ Սարգսեանի Եղբոր Առաջադրուած է Մեղադրանք

ՀՀ քննչական կոմիտէի Յատկապէս կարեւոր գործերով (ՅԿԳ) քննութեան գլխաւոր վարչութեան կողմէ կը շարունակուի «Հիւսիս-Յարաւ ճանապարհային միջանցք» ծրագրի մշակման եւ իրագործման գործընթացին մէջ թոյլ տրուած առերեւոյթ շարաշահումներու դէպքերու առթիւ յարուցուած քրէական գործի նախաքննութիւնը:

Մասնաւորապէս՝ պարզուած է, որ թէեւ ըստ իրաւական ընթացակարգերու ենթակապալառու կազմակերպութիւններու ընտրութիւնը գլխաւոր կապալառու սպանական կազմակերպութեան կողմէ պէտք է կատարուէր Ծրագրի ճարտարապետի եւ պատուիրատուի՝ ՀՀ կապի եւ փոխադրութեան նախարարութեան համապատասխան պաշտօնատար անձանց համաձայնութեամբ, սակայն փաստացի այդ գործընթացները ղեկավարուած են ՀՀ յատուկ յանձնարարութիւններով ղեկավար, ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի եղբոր՝ Լեոյի Սարգսեանի կողմէ, որ այդ գործըն-

կով շփումներ, մենք չունենք», - վստահեցուցած է Մնացականեանը: Հայաստանի արտաքին գործոց նախարարի բնորոշմամբ՝ այս տարուան ընթացքին Հայաստանն ու Միացեալ Նահանգները ունին «չափազանց բաւարար երկխօսութիւն» բարձր մակարդակով:

«Եթէ ուշադրութիւն դարձնենք՝ ե՛ւ վարչապետի, ե՛ւ արտաքին գործոց նախարարի հանդիպումների ծաւալը եւ մակարդակը, հաշուի առնելով նաեւ Միացեալ Նահանգների պետական կառուցուածքը, մենք որեւէ պակաս՝ Միացեալ Նահանգներու հետ շփումների՝ բարձր մակարդակով, այսօր չունենք: Ե՛ւ Սպիտակ տան մակարդակով, ե՛ւ Պետական քարտուղարութեան մակարդակով, բարձր մակարդակում մենք ունենք շատ աշխուժ երկխօսութիւն: Եւ չունենք որեւէ սահմանափակում՝ ցանկացած պահի աշխուժացնելու: Շատ պարզ լեզուով ասեմ՝ եթէ ես որեւէ պատգամ ունեմ, որեւէ բան ունեմ ստեղծ, ես անմիջապէս կարող եմ հասցընել դա Միացեալ Նահանգների բարձր մակարդակի իմ գործընկերներին», - յայտարարած է Ջոն Դոնալդ Մնացականեանը:

Թացները կազմակերպած եւ իրականացուցած է Ծրագրին մէջ որպէս ենթակապալառու հանդիպացող «ՓՈՒԻՐԱՆՍՓՈՐՏ» ընկերութեան սեփականատէր Սուրէն եւ Գէորգ Վարդանեաններու հետ:

Պարզուած է, որ Լեոյի Սարգսեան իր ունեցած դիրքի եւ կապերու շնորհիւ, իրական ազդեցութիւն ունեցած է 250 միլիոն ԱՄՆ տոլար արժողութեան Ծրագրին մէջ վերը նշուած անձանց հետ, ձեռք բերուած նախնական համաձայնութեամբ կազմակերպութիւններէն մէկու տնօրէնէն պահանջած է վճարել աշխատանքներու կատարումէն ակնկալուող շահոյթի 50 տոկոսը, որու ստացումը կազմակերպած է փողերու լուացման միջոցով:

Նախաքննութեան ընթացքին ձեռք բերուած բաւարար ապացուցանելու հիման վրայ որոշում կայացուած է՝ Լեոյի Սարգսեանը որպէս մեղադրեալ ներգրաւելու մասին, անոր նկատմամբ յայտարարուած է հետախուզում եւ միջ-

## Հայաստանի Խորհրդարանը Սկսած է Ընտրական Օրէնագիրքի Մասին Նոր Օրէնքի Քննարկումները

Հայաստանի Ազգային ժողովը սկսած է Ընտրական օրէնագիրքի եւ Կուսակցութիւններու մասին օրէնքի փոփոխութիւններու գործընթաց, որու արդիւնքով կրնան տեղի ունենալ առանցքային փոփոխութիւններ երկու փաստաթուղթերուն մէջ:

Աշխատանքային խումբի համակարգող, «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Համազասպ Դանիէլեանի խօսքով, բաւարար ժամանակ ունին անդրադառնալու բոլոր խնդիրներուն՝ խոչորներէն մինչեւ առաջին հայացքով պակաս կարեւոր թուացող հարցերուն:

«Մենք գործընթացը վաղ ենք սկսել, որ մենք թէմա առ թէմա շատ մանրամասն կարողանանք անդրադառնալ», - «Ազատութեան» հետ գրոյցի ժամանակ ըսած է Դանիէլեան:

Ընտրական օրէնագիրքի ամենաքննադատուած կէտերէն մէկը՝ վարկանշային ընտրակարգի վերանայումը պիտի ըլլայ յառաջիկայ քննարկումներու առանցքը: Պատգամաւորի խօսքով՝ այս պահին յստակ միայն կրնայ ըսել, որ այդ ընտրակարգը «Իմ քայլ»-ի համար ընդունելի չէ:

«Կաւելացնէի, ընտրական վեճերի բողոքարկման կարգի հետ կապուած կարգաւորումները, քարտզարչաւի տեւողութիւն եւ աւելի ընդարձակ՝ քարտզարչաւի հետ կապուած կարգաւորումները, մի-

գուցէ՛ յանձնաժողովների ձեւաւորման կարգը, ընտրողների ցուցակներն են խիստ կարեւոր, որովհետեւ տասնամեակներ շարունակ մենք խօսում ենք դրանց ուժանցուած լինելու մասին», - նշած է իշխանական խմբակցութեան պատգամաւորը:

Ընտրական օրէնագիրքին մէջ առկայ քննարկման կամ վերանայման ենթակայ տասնեակ կէտերէն է նաեւ, օրինակ, պատգամաւորի թեկնածուին առաջադրուող պահանջներու հարցը: «Ներառեալ, օրինակ, երկբաղաքացիները նկատմամբ արգելանքը, որը պարբերաբար եղել է, այն պահից, ինչ ընդունուել է, մասն է կազմել մեր օրէնսդրութեան, միշտ եղել է <...>, վենետիկի յանձնաժողովի, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի բոլոր գեկոյցներում միշտ անդրադարձել են, որ սա խնդրայարոց է: Պէտք է դեռ քննարկենք», - ըսած է Դանիէլեանը:

Այնուամենայնիւ, պատգամաւորները պիտի աշխատին նախ կուսակցութիւններու մասին օրէնքի փոփոխութիւններու նախագիծի վրայ՝ փորձելով այն իրականութիւն դարձնել մինչեւ Յունուար 1-ը: Նախագիծը մշակելու ժամանակ մեծ ուշադրութիւն պիտի դարձնեն կուսակցութիւններու նիւթական աղբիւրներու թափանցիկութեան, հաշուետուողականութեան ու ներքին ժողովրդավարութեան հարցերուն:

## Արցախի Քաղաքներուն Սեջ Հիմնական Յաղթանակ Տարած Են «Ազատ Հայրենիք» Կուսակցութեան Անդամները

Սեպտեմբեր 8-ին տեղի ունեցան Արցախի տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւնները:

Ստեփանակերտի մէջ քաղաքապետ ընտրուած է Դաւիթ Սարգսեանը: Անոր օգտին քուէարկած է 7.787 ընտրող: Ան անկուսակցական է, «Ճեներալ Կրուփ» ընկերութեան գործադիր տնօրէնն է:

Միւս թեկնածուներէն Գրիգորի Սահակեանը ստացած է 4765 ձայն, Արեգ Աւագեանը՝ 3125 ձայն, Արմէն Յակոբեանը՝ 3059 ձայն, Արայիկ Աւաննիսեանը՝ 2108 ձայն: Ստեփանակերտի մէջ քուէարկութեան մասնակցած է 21615 ընտրող: Շուշի քաղաքը յառաջիկայ տարիներուն պիտի ղեկավարէ Արծուրիկ Սարգսեանը: Նախօրէին կայացած ընտրութիւններուն անոր օգտին քուէարկած է 879 ընտրող: Արծուրիկ Սարգսեանը Շուշի համայնքի ղեկավարի պաշտօնակատարն է, անկուսակցական:

Ասկերանի մէջ առաւել մեծ թիւով ձայներ ստացած է Սամուէլ Աղաջանեանը՝ 469: Ան գործող համայնքապետն է, «Ազատ հայրենիք» կուսակցութեան անդամ է: Միւս թեկնածուներէն Արմէն Բախչիյեանը, Նուէր Գաբրիէլեանը ստացած է 304 ձայն: Քաղաքապետի ընտրութիւններուն այստեղ մասնակցած է 1232 ընտրող:

Մարտակերտի մէջ քաղաքապետ ընտրուած է Միշա Գիւրճեանը: 1824 ընտրողէն անոր օգտին քուէարկած են 945-ը: Ան գործող քաղաքապետն է, անկուսակցական:

Նորդու թիւն ներկայացուած է դատարան՝ անոր նկատմամբ կալանա-

Մարտունի մէջ քաղաքապետ ընտրուած է Հայկ Սարգսեանը: Ան ստացած է 1292 ձայն: Միւս թեկնածուն Վատիմ Դանիէլեանը անոր գիշած է աւելի քան 200 քուէով՝ ստանալով 1051 ձայն: Ընտրուած թեկնածուն «Ազատ հայրենիք» կուսակցութեանն է, «Գոռ Սարգսեան» ՍՊԸ-ի տնօրէնն է:

Քարվաճառի մէջ 210 ձայնով ընտրուած է Սերկէյ Չիլինգարեանը: Ան գործող քաղաքապետն է, «Ազատ Հայրենիք» կուսակցութեանն է: Անոր մրցակից Սերբ Նալթախեանի օգտին քուէարկած է 190 ընտրող, ընդհանուր առմամբ քուէարկութեան մասնակցած է 407 քաղաքացի:

Հարդրու թի քաղաքապետ ընտրուած է Վահան Սաւաղեանը՝ 676 ձայնով: Ան անկուսակցական է, կ'աշխատի «Արցախէներկօ» ընկերութեան մէջ որպէս ճարտարագետ: Անոր միակ մրցակից Արծուրիկ Հայրապետեանի օգտին քուէարկած է 565 ընտրող:

Բերձորի մէջ քաղաքապետ ընտրուած է Նարեկ Ալեքսանեանը: Ան ստացած է 306 քուէ: Ան համայնքապետի տեղակալն է, «Ազատ Հայրենիք» կուսակցութեան անդամ: Քուէարկութեան մասնակցած է 986 ընտրող:

Յիշեցնենք, որ «Ազատ Հայրենիք» կուսակցութեան նախագահն է Արցախի նախկին վարչապետ Արայիկ Յարութիւնեանը, որ մտադիր է մասնակցելու Արցախի նախագահի՝ 2020 թուականին կայանալիք ընտրութիւններուն:

Լորու մը որպէս խափանման միջոց ընտրելու մասին:



# Աղթամարի Սուրբ Խաչ Եկեղեցւոյ Մէջ 7-րդ Անգամ Ըլլալով Սուրբ Պատարագ Մատուցուեցաւ



Վանայ լիճի Աղթամար կղզիի պատմական Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ Կիրակի օր 7-րդ անգամ պատարագ մատուցուած է:

Պոլսոյ Հայոց պատրիարքի տեղապահ Սահակ Եպիսկոպոս Մաշալեանի գլխավորութեամբ մատուցուած պատարագին հարիւրաւոր մարդիկ ներկայ էին Հայաստանէն, Սփիւռքէն, Թուրքիոյ տարբեր քաղաքներէն:

«Բացառիկ էր, հրաշալի վայր է Աղթամարը, Վանայ լիճը՝ տեսարանը, խորհուրդը: Մանաւանդ իմ պարագայիս սա իւրայատուկ երեւոյթ էր, որովհետեւ իմ պապերը մկրտուած են Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ եւ սա ինձի համար ընտանեկան եկեղեցի է», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ պատմած է պատարագին ներկայ հաւատացեալներէն մէկը:

նախարարի տարիներուն վերականգնուած ու վերաբացուած էր Սուրբ Խաչը:

Պատարագի ժամանակ իր խօսքին մէջ Եպիսկոպոս Մաշալեանը շնորհակալութիւն յայտնած է թրքական իշխանութիւններուն նման հնարաւորութիւն ընձեռելու համար:

95 տարի դադարէ ետք 2010 թուականին ի վեր ամէն տարուայ Սեպտեմբերին՝ Խաչվերաց տօնին յաջորդող կամ նախորդող Կիրակի օրը, Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցուի, սակայն 2015-էն 2017 թուականներու ընթացքին շրջանին մէջ քիւրտ զինեալներու եւ թրքական զինուորի միջեւ պարբերական բախումներու առնչութեամբ Թուրքիոյ իշխանութիւնները չէին արտօնած պատարագներ կատարելը:



«Վանայ լիճը, Վանի եկեղեցին տեսնելու յուզմունքս այնքան մեծ էր, որ միայն արցունքով կրցայ արտայայտել», -պատմած է պատարագի մէկ այլ մասնակից:

Թրքական իրաւապահ մարմինները անհրաժեշտ միջոցներ ձեռնարկած էին միջոցառման անվտանգութիւնը ապահովելու համար, թէեւ նախորդ տարիներու համեմատ Աղթամարը այնքան ալ մարդաշատ չէր:

Պատարագին մասնակցած էին նաեւ շարք մը թուրք պաշտօնեաներ՝ Վանի նահանգապետ Մեհմետ էլին Պիլմէզը, Մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան Վանի նահանգային ղեկավար Մուրաթ Աթուրը, Կեւաշ շրջանի ղեկավարութիւնը, ինչպէս նաեւ Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախկին նախարար էրթուրուլ Կիւնայը, որու պաշտօն-


եռամեայ դադարէն ետք՝ անցեալ տարի, եկեղեցւոյ մէջ կրկին պատարագ տեղի ունեցաւ:

Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութիւնը 2005 թուականին ձեռնարկած էր Սուրբ Խաչի վերականգնման աշխատանքները: Մօտ 2 տարի տեւած վերակառուցման նախագիծին համար շուրջ 4 միլիոն լիրա ծախսուած էր:

Այս առթիւ Կէվայի քաղաքապետ Մուրատ Մէզէր, էտրէմիտի մէջ, սարքեց սիրոյ սեղան մը, որուն ներկայ եղան պաշտօնական անձնաւորութեանց աւրընթեր պատրիարքական տեղապահն ու իր գլխավորած պատուիրակութեան անդամները, ինչպէս նաեւ Կէվայի ներկայացուցիչներ: Քաղաքապետը Սահակ սրբազանին նուիրեց ձեռագործ նկար մը, որ շրջանի համայնապատկերն էր:

# Պօղոս Պօղոսեանի Սպանութեան Բրիտանացի Ականատեսը Հայաստան Է Եւ Պատրաստ Է Դատարանէն Ներս Կրկնելու Իր Ցուցմունքը

Վրաստանի 43-ամեայ քաղաքացի, դաշնակցական Պօղոս Պօղոսեանի սպանութեան 18 տարի առաջ ականատես եղած Սթիւըն Նիւթոնը Հայաստան է եւ պատրաստ է դատարանէն ներս կրկնելու այն ցուցմունքը, որ 2001 թուականին դատաւոր Մնացական Մարտիրոսեանի նախագահած դատարանը որոշած է հաշուի չառնել՝ հիմնաւորմամբ, թէ այն անգլերէն էր:



Գործով հիմնական վկայ համարուող Մեծ Բրիտանիոյ քաղաքացին, որ 2001-ին որպէս հրահրեալ դասախօս դասաւանդած է Կառավարման դպրոցին մէջ, կ'ըսէ՝ տեսած է, թէ ինչպէս երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի թիկնազօրը «Առաջատար» սրճարանի գոլգոթային մէջ դաժանաբար ծեծելով սպանած է Պօղոս Պօղոսեանը՝ այդ օրը սրճարան եկած Շարլ Ազնաւուրին եւ Ռոպերթ Քոչարեանին մօտենալու եւ «փրկէթ, Ռոպ» ըսելու համար:

Սթիւըն Նիւթոնը «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ պատմած էր - «2001 թուականի սեպտեմբերին ես «Փափլաուք» էի խումբ մը ընկերներու»՝ երաժիշտներու, արուեստագէտներու, քանդակագործներու հետ, մենք դուրսը լաւ երեկոյ կ'անցընէինք: Քոչարեանը եկաւ իր շքախումբով: Անոր հետ էր Ազնաւուրը, եւ բոլորը ծափահարեցին հաճելի ծերուկին: Անոնք նստեցան սեղանի շուրջ: Բայց այդ երեկոյ աւելի վաղ այդտեղ էին երկու տղամարդիկ, որոնք ենթադրաբար Քոչարեանին գիտէին, ինչ-որ առիթ կը ունէին: Ըստ երեւոյթին, անոնք մօտեցան Քոչարեանի սեղանին՝ ըսելով՝ «Բարեւ, Ռոպ» կամ նման բան մը: Եւ ան կէտ վիրաւորուեցաւ: Երբ Քոչարեանը գնաց, մենք նստած էինք՝ ներքեւ, ուղիղ տղամարդոց համար նախատեսուած գոլգոթային եւ դէպի ճանապարհ տանող աստիճաններու դիմաց: Քոչարեանին բարեւոյ տղամարդիկ անոր ետեւէն գացին ու յետոյ ետ եկան, անոնց թիկնապահները ետ հրեցին, հրեցին տղամարդոց գոլգոթային: Կինս ըսաւ, որ անոնց պիտի սպանեն: Ես չէի հաւատար լսածիս ու ըսի՜ - «Ոչ, քանի դեռ ես այստեղ եմ»: Ես վազեցի, մտայ ներս: Այդ կուկուկոչուածը ատրճանակի կոթով կը ծեծէր երկրորդ տղամարդուն: Ես անոր հրեցի: Երբ մտայ ներս, երկրորդ տղամարդը՝ Պօղոս Պօղոսեանը, ինկած էր գետին, ան համարեայ մեռած էր, անոր գլուխը ուռած էր: Ես պոռացի՝ օգնութիւն կանչեցի: Անոնք չէին գիտեր,

թէ ես ով եմ: Կը կարծեմ, մտածեցին, թէ դեսպան եմ, քանի որ «քոսթիւմով» էի: Կինս եկաւ, որ տեսնէ, թէ ինչ կը կատարուի հետս, մտահոգուած էր: Ես անոր ըսի, որ շտապօգնութիւն կանչէ: Բժիշկները շատ արագ եկան, բայց այդ տղամարդը մահացաւ...»:

74-ամեայ Սթիւըն Նիւթոնը պատմած է, որ յաջորդ օրն իսկ Հայաստանի մէջ Բրիտանիոյ դեսպանը օգնած է իրեն մեկնել Ռումինիա, քանի որ իր անվտանգութեան հետ կապուած անհանգստութիւններ ունեցած են: Նիւթոնը, սակայն, կնիքով հաստատուած իր ցուցմունքը այդ երկրի մէջ բրիտանական հիւպատոսի ներկայութեամբ ստորագրած է եւ ուղարկած է Հայաստան: Ցուցմունքը, որուն իր օրինակը Նիւթոնը մինչեւ հիմա կը պահէ, Պօղոս Պօղոսեանի իրաւաջողորներու փաստաբան Ռուբէն Սահակեանը չի յաջողած կցել գործին: Նկատելի՜ Ռուբէն Սահակեանը այժմ Քոչարեանի շահերը պաշտպանող փաստաբաններէն մէկն է, իսկ այն ժամանակ կը ներկայացնէր սպանուած Պօղոս Պօղոսեանի եղբօրը:

Բրիտանացին նաեւ յիշած է՝ դէպքի օրը սրճարանին մէջ տեսած է նաեւ այն ժամանակուայ արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեանին, որ որեւէ կերպ չէ արձագանգած օտարերկրացիի պնդումներուն, որ հիմա նոր սրճարանին մէջ մարդ սպանուած է ու պէտք է ոստիկանութիւն հրահրել:

Ի դէպ, Սթիւըն Նիւթոնը ըսած է՝ թաւշեայ յեղափոխութենէն ետք՝ դեռ անցած տարի իր ցուցմունքը պարունակող նամակ ուղարկած է վարչապետ Նիկոլ Փաշինեանին, բայց դեռ պատասխան չէ ստացած:

Հանդիպում մը ունեցաւ Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախկին նախարար էրթուրուլ Կիւնայի հետ: Ան մտերմիկ զրոյցի ընթացքին շեշտեց երկու ժողովուրդներու կապերուն անհրաժեշտութիւնը եւ այլեւս աւանդական դարձած աղթամարի ուխտագնացութիւնն ու պատարագը: Ապա իր յօդուածները վերջին ժողովածոյին հատորը նուիրեց տեղապահին:

Արամ Սրբազան այցելեց նաեւ Վանի նորակառոյց թանգարանը եւ տեղւոյն գիտաշխատող Աթիշ շա Կէօքի առաջնորդութեամբ ծանօթացաւ հարուստ հաւաքածոյին:

Նշենք նաեւ Սահակ Եպիսկոպոս իր Վան այցելութեան առթիւ քաղաքավարական այցելութիւն մը տուաւ կուսակալ Մէհմետ էմին Պիլմէզին: Ան շնորհակալութիւն յայտնեց թէ ընտանջուած ընդունալութեան եւ թէ արարողութեան կատարման կապակցութեամբ ընծայուած դիւրութեանց համար: Այս առթիւ տեղապահ Սրբազանը կուսակալին նուիրեց Հայ Եկեղեցւոյ կերպասեայ գանձերու մասին հատորը: Իսկ կուսակալը Նիւթոնի սրբազնութեան նուիրեց Աղթամարի յախճապակեայ նկար մը:

Օր մը առաջ Սահակ Սրբազան



### Սիրիայից Նոր Հոսք Ե Սպասուում Հայաստան

#### ՆԱՐԱ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Փախստականներն իրենց անցած ճանապարհը հեշտ չեն մոռանում, ոմանք լքում են բնակութեան վայրը, վերցնելով իրենց հետ անհրաժեշտ իրերը, ոմանք էլ ճամփայ են ընկնում անճամպրուկ, միայն քչերին է յաջողում վաճառել տուն՝ ունեցուածք եւ տեղափոխուել այլ երկիր ինքնուրույն նոր կեանք սկսելու:

Սեպտեմբերի 2-ին ՀՀ ԳԱ Արեւելյան թեման ինստիտուտի կողմից «սիրիացի փախստականների ճգնաժամը. տարածաշրջանային միջնադարը» վերաբերյալ մարտահրավերները» թեմայով միջազգային գիտաժողովի բացմանը ՀՀ տարածաշրջանային կառավարման եւ ենթակառուցուածքների նախարարութեան միգրացիոն ծառայութեան պետ Արմէն Ղազարեանը նշեց, որ Հայաստանը Սիրիայից ընդունել է շուրջ 22000 փախստական, որոնցից Հայաստանում մնացել են շուրջ 14000-ը, իսկ մնացածը մեկնել են տարբեր երկրներ մեր երկրում ինտեգրման համարի մասնակցում չլինելու պատճառով:

Գիտաժողովին Արեւելյան թեման ինստիտուտի փորձագէտ Արաքս Փաշայեանը եւս անդրադարձաւ սիրիացիների այլ երկրներում հաստատուելու խնդրին՝ «մենք, որպէս պետութիւն, որպէս հասարակութիւն կը ցանկանայինք, որ Հայաստան վերադարձած սիրիացիները ապրէին այստեղ այնքան, որքան իրենք կը ցանկանան, եւ կարողանայինք բոլոր հնարաւոր պայմանները ստեղծելով իրենց բարեկեցութեան համար, բայց ցաւօք սիրիացիները Հայաստանից բացի փորձեցին հաստատուել այն երկրներում, որոնց կառավարութիւնները ունէին ծրագրեր փախստականներին օգնելու հետ կապուած՝ Գանատա, Եւրոպական միջազգային բնակարաններ, Շուէտ, Գերմանիա...»

Սիրիացիները շատ դէպքերում չեն ցանկանում Հայաստանում զրոյացուել որպէս փախստական՝ համարելով, որ Հայաստանն իրենց պատմական հայրենիքն է եւ իրենք Հայաստանում փախստական չեն: Իրենք եկել են ճիշտ է պատերազմից, բայց նրանցից շատերը ասում են, որ իրենք ուղղակի հայրենադարձուել են Հայաստան, եւ պատերազմը դարձել է այն պատճառը, որ իրենք յայտնուեն Հայաստանում:

Երեւանում փախստականների բնակեցման համար նախատեսուած կացարանում իրար հարեւանութեամբ ապրում են տարբեր ժամանակահատուածներում եւ տարբեր վայրերից Հայաստան եկած փախստականներ՝ 2012թ. Սիրիայից եկած սիրիացիներ, 2006թ. Իրաքեան պատերազմից եկած իրաքահայեր, դեռեւս 1988թ. Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հետեւանքով Աղբբեջանից ներգաղթածներ:

«Սիրիացիների խնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն այն հարցմանը, թէ ներկայում որոնք են սիրիացիների հիմնախնդիրները Հայաստանում, բացի աշխատանքի, ցածր վարձատրութեան, տուն չունենալու եւ տան վարձը վճարելու անկարողութեան խնդիրներից առանձնացրեց նաեւ եւս մէկ կարեւոր խնդիր՝ առողջական խնդիրների եւ վիրահատութիւնների մեծ ծախսերը:

Սիրիահայերից մէկը, որը չցանկացաւ անունով ներկայանալ, պատմեց, որ 2012թ. ընդամէնը 15 օրով էին եկել, մտածում էին իրավիճակը կը կարգաւորուի, իրենք էլ հետ կը վերադառնան. «15 օրով եկանք, բայց արդէն 7 տարի է այստեղ ենք ապրում, այստեղի մեր բարեկամների հետ կապը պահում ենք, ամէն օր սպասում էինք, որ պիտի ասեն հետ եկէք, բայց հակառակը ասացին: Մի գաղտնիք ասեմ, Սիրիայում դեռեւս ապրող հայերի մի հոսք էլ կգա՝ Հայաստան, սպասում են մի քիչ վիճակը կարգաւորուի, տները վաճառեն ու գան: Իմ տալի տղան գինուոր էր այդ տարիներին, հոյ չէին թողնի իրենց երեխային իրենք գալին, ստիպուած մնացել են, ամուսնուս միւս բարեկամներն էլ են դեռեւս այստեղ, բայց էլ հայրութիւն չի մնացել, նախկինում հայերը շատ էին ու առանձնացուած էինք մուսուլմաններից, մեզ ոչ ոք չէր անհանգստացնում: Երբ մեզ այս բնակարանը տրամադրեցին, աւերակ էր, ամուսինս գարմացած նայեց դէմքիս ու հարցրեց. «դու այստեղ պիտի ապրիս», բայց այլ ելք չունէինք, սանհանգստեց ՄԱԿ-ի կողմից վերանորոգուեց, որոշ կոսմետիկ վերանորոգում էլ մենք արեցինք, բայց չորս հոգու համար չափազանց նեղուած է», դժգոհում է ընտանիքի մայրը՝ անդրադառնալով նաեւ «Առաքելութիւն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից տրամադրուող դեղորայքին. «մինչեւ 2019թ. սկիզբն ստացել եմ անվճար դեղորայք՝ ոտքիս տրոմբի համար, իսկ հիմա դադարեցուել է»:

Սեփական ֆինանսով բուժման համար անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերումը նաեւ խնդիր է դեռեւս 2006թ. Հայաստան եկած իրաքահայ ընտանիքի համար, որոնք նախընտրում են մնալ փախստականի կարգավիճակում, չդառնալ ՀՀ քաղաքացի՝ փոխարէնը անվճար դեղորայք ստանալ:

«Մենք իրաքահայ ենք, մեր նախնիները գաղթել են իրաք 1915թ. Եղեռնի ժամանակ, իսկ 2006թ. պատերազմի պատճառով մենք իրաքից գաղթեցինք Հայաստան: Կինս Պաղտատում պայթիւնի ժամանակ վիրաւորուեց, վտանգ կար նաեւ, որ երեխաներիս կողմանային, որովհետեւ այդ շրջանում երեխաներին բակից առեւանգում ու գումար էին պահանջում ծնողներից: Մեծ քրոջս տղան 23 տարեկան էր, 2005-2006թ.թ. աշխատում էր անգլիացիների հետ Պատարա քաղաքում, մի օր եկան տնից տարան իրեն, իսկ երկու օր անց մահացած գտանք աղբանոցում», պատմում է իրաքահայ փախստական Օհանէս Օհանէս-ցաւն ու մի կերպ զսպում հոգու ցաւն ու արցունքները նոյնիսկ 13 տարի անց:

Օհանէսն ու իր կինը՝ Մարիամը բաւական հիւրընկալ եւ շփուող մարդիկ են, առաջին հայեացքից նկատելի էր, որ Մարիամն ունի ոտքի վնասուածք, բայց կարծես անտեսել էր այն եւ զբաղուած էր տնային գործերով:

«Բոլոր բարեկամներս եկել են Հայաստան, այստեղ այլեւս ոչ ոք չունենք: Մեր տունը Պաղտատում էր, ամէն ինչ թողել ենք այստեղ, ոչինչ չենք կարողացել վաճառել, աւտօբուսով եկել ենք Սիրիա, այն ժամանակ Սիրիայում խաղաղ էր, այնուհետեւ օդանաւով եկանք Հայաստան: 2006թ.-ից այս-

տեղ ենք ապրում: Հայաստանում էլ կորուստ ունեցանք, տղաներիցս մէկն առողջական խնդիր ունէր, բայց այստեղ ապահով է, աղջիկս Հուլիանիտար քոլեջում է սովորում գործավարութիւն եւ թարգմանչութիւն, տիրապետում է հայերէն, գերմաներէն, ռուսերէն, անգլերէն, արաբերէն լեզուների, եւ աշխատանք ունեմ, սանտեխնիկ եմ աշխատում, թէպէտ տան միակ աշխատողը եւ եմ եւ ցածր եմ վարձատրում, բայց չեմ դժգոհում, այստեղ մենք մեզ լաւ ենք զգում, ապահով ենք: Եթէ ամիսը 150.000 դրամ աշխատավարձ ստանայի կնոջս ոտքի բուժման համար անհրաժեշտ դեղորայքը եւ կգնէի» շարունակում է պատմել Օհանէսն ու աւելացնում, որ չի դիմում ՀՀ քաղաքացիութիւն ստանալու համար, որովհետեւ եթէ քաղաքացիութիւն ստանան, իր կինը կը զրկուի «Առաքելութիւն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպութիւնից անվճար տրամադրուող դեղորայքային օգնութիւնից. «մեզ ծանօթ իրաքահայերը, ովքեր ՀՀ քաղաքացիութիւն են ստացել, այլեւս որեւէ օգնութիւն չեն ստանում:

ՄԱԿ-ի կողմից մէկ տարի առաջ աղջկաս մէկ տարուայ ուսման վարձը ֆինանսաւորուեց: Ես միայն մի բանից եմ վիրաւորուած՝ ինչու պէտք է հայրենադարձներին եւ այլ երկրներից՝ օրինակ Եմենից եկած օտարերկրացուս, որը հայ չէ, նոյն ճամփորդական անձնագիրը տրուի»:

Օհանէսի ընտանիքի ճամպորուկային կարգավիճակը կարծես չի աւարտուում, կարճ ժամանակ առաջ էլ տղային ճանապարհել է ԱՄՆ, իր խօսքով՝ ԱՄՆ-ն երիտասարդների եւ ծերերի համար բարենպաստ պայմաններ ստեղծող երկիր է:

«Առաքելութիւն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպութիւնը ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ֆինանսաւորուող «սոցիալական, բժշկական, իրաւաբանական եւ կացարանային աջակցութեան տրամադրում Հայաստանում գտնուող փախստականներին եւ ապաստան հայցողներին» ծրագրի շրջանակում շահառուներին տրամադրում է ՀՀ բժշկական հաստատութիւններում աշխատող, ինչպէս նաեւ անհատական բժշկական գործունէութիւնով զբաղուող բժիշկների կողմից լրացուած դեղատոմսերով եւ ՀՀ-ում պետական գրանցում ստացած եւ հաւաստագրուած դեղեր:

ՄԱԿ ՓԳՀ գործընկեր «Առաքելութիւն Հայաստան» ԲՀԿ-ի բուժ-ծառայութեան ղեկավար Աշոտ Սարգսեանն, անդրադառնալով փախստականներին եւ ապաստան հայցողներին տրամադրուող դեղորայքին, յատկեցրեց, որ Սիրիայի ճգնաժամը դեռեւս աւարտուած չէ եւ եթէ նոյնիսկ ՀՀ քաղաքացի են դառնում, համարում են փախստականի նման իրավիճակում յայտնուածներ եւ ՄԱԿ-ի կողմից ֆինանսաւորուող դեղորայքային ծառայութիւնից շարունակում են օգտուել ի տարբերութիւն իրաքի փախստականների, որոնք ՀՀ քաղաքացիութիւն ստանալու դէպքում այլեւս չեն կարող օգտուել ծրագրի շրջանակում դեղորայք ստանալու հնարաւորութիւնից:

«ՄԱԿ-ի ֆինանսաւորումը վտանգ սպանացող դէպքերում եւ որոշակի հիւանդութիւններին եւ վիճակների ժամանակ դեղորայքով ապա-

հովում ենք, ինչպէս նաեւ համագործակցում ենք պետական բուժ-հիմնարկների հետ եւ տալիս ենք այն դեղորայքը, որը չի ապահովում պետութիւնը: Ինչ վերաբերում է տրոմբին, դա կեանքին անմիջական վտանգ սպանացող չէ, բայց հնարաւորութիւն ունի վտանգ սպանալու, կանխարգելող դեղեր ենք տրամադրում, իսկ եթէ անօթների խնդիր ունի, դրա դեղորայքը չի տրամադրում կազմակերպութեան կողմից, այդ դեղորայքն արդէն կամ պետութիւնը պէտք է տրամադրի, կամ հիւանդն ինքը ձեռք բերի այլ աղբիւրներից: Դեղորայքի ցանկը հաստատում է ՄԱԿ-ը, ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից հաստատուած «փախստականներին եւ ապաստան հայցողներին անհատական աջակցութեան վերաբերեալ ստանդարտ ընթացակարգի» համաձայն: Տարեկան կտրուածքով մէկ անձի համար դեղորայքի համար սահմանված առաւելագոյն գումար կայ, որի իրականացումը կատարուած է նաեւ հաշուի առնելով դեղորայքի ընդհանուր տարեկան բիւջէն, օրինակ 1 անձը կարող է տարուայ ընթացքում կազմակերպութիւն ներկայացնել 1000 դրամ արժողութեան դեղի դեղատոմս, իսկ մէկ ուրիշի համար 150 000 դրամն էլ չբաւարարի. դա կախուած է առկայ հիւանդութիւններից, դրանց ծանրութեան աստիճանից, ընթացքից, ուղեկցող բարդութիւններից եւ այլ գործօններից»:

Մինասովա Օլգան Հայաստան է ներգաղթել 1988թ., Բագուում թողնելով իր տունն ու ունեցուածքը եւ դեռեւս ապրում է Իրաքահայ եւ Սիրիահայ փախստականների հետ նոյն կացարանում: «Տարբեր վայրերում վարձով ենք ապրել նաեւ գիւղերում մինչեւ 2010թ.: 2010թ.-ից այս կացարանում ենք ապրում, որը շատ դժուարութեամբ մեզ տրամադրուեց, իմ բազմաթիւ դիմումներից ու բողոքներից յետոյ: Ես ու ամուսինս հաշմանդամ ենք, ամուսինս 71 տարեկան է՝ երկրորդ կարգի հաշմանդամ, իսկ ես 67 տարեկան եմ՝ երրորդ կարգի հաշմանդամ: Իմ ու ամուսնուս եկամուտը մեր թոշակն ու 18.000 դրամ նպաստն է, իսկ բնակարանն արդէն երեք տարի է վերանորոգման կարիք ունի, թէպէտ մեր այստեղ մնալու տարիներին մեր ֆինանսով երկու անգամ վերանորոգել ենք», պատմում է մօտ 14 քառակուսի մետր, վատթար վիճակում գտնուող բնակարանում ապրող, արդէն իսկ Հայաստանի քաղաքացին:

Դեռեւս Յունիսի 20-ին՝ Փախստականների համաշխարհային օրը, «Մեդիայ կենտրոնում» կազմակերպված Հայաստանում փախստականներին առնչուող խնդիրների վերաբերեալ քննարկման ժամանակ տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքների նախարարութեան միգրացիոն ծառայութեան հանրային կապերի պատասխանատու Նելլի Դաւթեանն անդրադարձաւ 1988-1992 թ.թ.-ին Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հետեւանքով ՀՀ ներգաղթած փախստականների բնակարանային խնդրին: 1988-1992 թ.թ.-ին Աղբբեջանից Հայաստան ներգաղթել են 360 հազար հայ փախստականներ: Այդ ընտանիքներից 882-ը այսօր սպասում են բնակարանային իրենց հերթին: Նրանցից 600-ը բնակուում են Երեւանում, 200-ը՝ մարզերում:

### Յուշ Երեկոյ Նուիրում Փրօֆ. Վահագն Տատրեանին

Կիրակի, Սեպտեմբեր 15, 2019ին երեկոյան ժամը 6ին, կազմակերպութեամբ Պոլսահայ Միութեան, տեղի պիտի ունենայ Յուշ Երեկոյ եւ Հոգեհանգստեան Պաշտօն՝ առասպելական գիտնական՝ Փրօֆ. Վահագն Նորայր Տատրեանի, Պոլսահայ Միութեան Կեդրոնի «Գուրեան տանիքը»: Զեռնարկը պիտի հանդիսավարէ անուանի իրաւաբան Կարօ Ղազարեան:

Յարգանքի տուրքի մատուցման եւ տօնակատարման հանդիսաւոր այս ձեռնարկին առթիւ, Պոլսահայ Միութիւնը հպարտ է յայտարարելու թէ պիտի ձեռնարկէ Պոլսահայ Միութեան «Վահագն Ն. Տատրեանի Յեղափոխութեան Ուսումնականութեան», անուանի տարեկան առաջին մետալի շնորհման: Այս մրցանակը պիտի ներկայացուի ակնառու եւ միջազգայնորէն նշանաւոր գիտնականներուն, որոնց հետազօտութիւնները, գրութիւնները եւ գործողութիւնները յառաջ մղած են Վահագն Ն. Տատրեանի արդարադատութեան տեսլականը, ցեղասպանութիւններու կանխարգիլման, ինչպէս նաեւ մարդկային արժանապատուութեան խթանման համար: Սոյն յատուկ երեկոյի ընթացքին, այս մրցանակը առաջին ստացողը պիտի ըլլայ Փրօֆ. Թանէր Աքչամ, սիրելի ընկեր եւ գործակից՝ Փրօֆ. Տատրեանի նաեւ պիտի ըլլայ գլխաւոր բանախօ-



սր: Զեռնարկին պիտի յաջորդէ հիւրասիրութիւն:

Ձեր ներկայութիւնն ու մասնակցութիւնը մեծ պատիւ պիտի ըլլայ Պոլսահայ Միութեան, մինչ մենք կ'ոգեկոչենք Պոլսոյ եւ Հայ Ազգին այս մեծ զաւակը:

Տեղեր ապահովելու համար հեռաձայնել Միութեան քարտուղարուհի՝ Տիկին Մարիէթին (818) 342-2551 թիւին՝ գրասենեակին աշխատանքի ժամերուն ընթացքին, մինչեւ Սեպտեմբեր 13, Երեքշաբթիին մինչեւ Ուրբաթ, կամ ելեկտրոնային հասցէին bolsahye1976@gmail.com եւ կամ հեռաձայնելով Միութեան Հոգաբարձու՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանի բջիջային հեռախօսին (818) 800-1976:

### Արմէն Անասեանի «La Boheme» Դամերգը Դոլիվուդում

ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Այս տարուայ Ապրիլ ամսին ներկայ եղայ ճանաչուած Չուֆա-կահար եւ դիրիժոր Արմէն Անասեանի այսպէս կոչուած «Ընտանեկան համերգ»-ին: Արմէնի համար վաղուց աւանդուցի է դարձել արտերկիր համերգների մեկնելուց առաջ, ընկերների, երաժիշտ բարեկամների համար որպէս վերջին փորձ կատարել արտասահմանեան յայտագիրը: Ինչպէս միշտ, այս անգամ եւս այդ համերգը կայացաւ Արմէնի ծնողների՝ Հենրիկ եւ Մարիետա Անասեանների հարմարաւէտ առանձնատանը:



Փոքրիշատէ դժուարամարս գործերի կողքին Արմէնը տաղանդաւոր դաշնակահար Մարկ Ռոբսոնի հետ մէկտեղ միջոցառումները սասցրին հայ կոմպոզիտորներ Աւնօ Բաբաջանեանի, Խաչատրեանի եւ Կոմիտասի փոքրածաւալ գործերով, ինչպէս նաեւ արգենտինեան երաժշտութեամբ:

Համերգից յետոյ, ընդունելութեան ճոխ սեղանի շուրջը գրուցելիս, մտաւորական-ներից մէկը չի թաքցնելով իր ոգեւորութիւնը բարձրաձայն արձագանքեց. «Մեղք է նման երեկոյ մը կազմակերպել միայն 30-40 անձերու համար: Պէտք էր նման փառաշուք երեկոյ մը կազմակերպել զէթ 100-էն 200՝ իսկական դասական արուեստը սիրողներուն համար»:

Ճիշդ էր դիտողութիւնը, որը կեանքի կոչելու համար, որոշեցի ինքս կազմակերպել նման մի երեկոյ՝ քիչ թէ շատ ճանաչուած մի սրահում: Մինչ Արմէնը գտնուած էր Ռուսիայում, ուր մեկնել էր 4 համերգների (2-ը մենահամերգ,

2-ը սիմֆոնիկ նուագախմբի հետ), ես կապուեցի լաւագոյնս յայտնի Հոլիվուդի Catalina Jazz Club-ի ղեկավարութեան հետ, որոնց հետ, համագործակցաբար «Ֆրանսիական երգի երեկոյ» ձեռնարկն էինք իրականացրել մի քանի տարի առաջ, որն անցել էր անակարգրելի ոգեւորութեան պայմաններում: Jazz Club-ի տնօրինութիւնը սիրայոժար համաձայնուեց պայմանագիր կնքել ինձ հետ:

Արմէնը սիրով ընդունեց իմ առաջարկը: Ուրեմն այսպէս. Հանրամատչելի դասական երաժշտութեան համերգը Չուֆակահար Արմէն Անասեանի եւ դաշնակահար Մարկ Ռոբսոնի կատարմամբ տեղի կ'ունենայ Հիլզ, Սեպտեմբերի 19-ին, երեկոյեան ժամը 8.30-ին Հոլիվուդի Catalina Jazz Club-ում: Հասցէ. 6725 Sunset Blvd, Ca 90028:

Սրահի դռները բացում են ժամը 7-ին՝ ընթրիքի համար: Տոմսերի եւ յաւելեաց տեղեկութիւնների համար զանգահարել (323) 807-7878:

### Ասիւ Զարմանտեան

Ստորեւ կու տանք Նոր Սերունդ Մշակութային Միութեան աստեղայտ Յարութ Տեր Դաւիթեանի դամբանականը, խօսուած անուանի երգիչի յուղարկաւորութեան պահուն

Վարժարանի հոգաբարձութեան ատենապետ Պաշիկ Ճանոյեան սրտի խօսքերով ելոյթ ունեցաւ: Պրն. Ճանոյեան ողջունելէ ետք բոլոր ծնողները եւ աշակերտները վարժարանի 40-րդ կրթաշրջանի առիթով, վստահեցուց ծնողներուն, որ իրենց գաւակները հոյակապ ուսուցչուհիներու եւ տնօրէնութեան ձեռքի մէջ են եւ որքան այս ուսուցչական կազմին մօտէն ծանօթ ըլլան, այնքան պիտի սիրեն մեր ուսուցչուհիները, ապա Պրն. Ճանոյեան բարի երթ մաղթեց դպրոցի տնօրէնութեան ուսուցչուհիներուն եւ աշակերտութեան:

Խօսք առաւ թանկագին Դոկտ. Էլլի Անդրէասեան, որ սրտաշարժ խօսքով մը շնորհակարտեց ներկայ ծնողները, որ իմաստութիւնը ունեցած են իրենց գաւակները հայկական դպրոց ղրկելու, որպէսզի սորվին հայերէն լեզուն եւ հայրութեան մօտ ըլլան ու կապուին, ըսաւ Դոկտ. Անդրէասեան արժանանալով ներկայ ծնողներուն ու ուսուցչական կազմի երկարատեւ ջերմ ծափերու:

Այդ օր ներկայ էր Լոս Անճելոսի մէջ ազգային եւ աշուղական երգերու գեղեցիկ մեկնաբան Գէորգ Չաքմայեան, որ խօսք առաւ ու շնորհակարտեց բոլոր ծնողները, ապա ազգային հայրենասիրական երգերու փունջ մը կատարեց արժանանալով ժողովուրդի ջերմ գնահատանքին:

Պաշտօնական հանդիսութեանէն ետք, բոլոր ծնողները անցան յատուկ սրահի մէջ տնօրէնութեան հետ

Շար.ը էջ 17



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

**(818) 500 9585**

805 E. Broadway, Glendale, CA 91205  
sbmaronian@gmail.com  
CA INSURANCE LICENSE # 0C99815

**MaronianInsurance.com**



HEALTH



LIFE



COMMERCIAL



# Շահե Արքեպիսկոպոս Գասպարեան Վերատեսուչ Կիլիկիոյ Աթոռի Անթիլիասի Դպրեվանքին (1882-1935)

«Արմաշի երիցագոյն աշակերտը այդ օր եպիսկոպոս կը ձեռնադրէր Արմաշի կրտսերագոյն իր աշակերտներէն մին, սերտ կապ մը հաստատելով երկու նոյնանման հաստատութեանց միջեւ, Արմաշի եւ Անթիլիասի Դպրեվանքներուն, առաջինին փակումէն 15 տարիներ ետք, եւ երկրորդին բացման վաղորդայնին»:

ԴՊԿՏՈՐ ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

### Ընտիր Հոգեւորականը

Արմաշական միջին սերունդի ընտիր հոգեւորականներէն մին էր Շահէ Արքեպիսկոպոս Գասպարեան, ծննդեամբ Այնթապցի եւ անդեամբ Արմաշու Դպրեվանքի վերատեսուչ եղիշէ եպիսկոպոս Դուրեանի շուկին տակ, որմէ 1904 թուին քահանայական ձեռնադրութիւն կը ստանային Չարխափանի Սուրբ Աստուածածին Մայր Տաճարին մէջ չորս օժակիցներ միասին: Դուրեանի Չմիւռնիոյ առաջնորդութեան ընթացքին պատահեցան չորսերու ձեռնադրութիւնը, երբ Սրբազանը յատկապէս Արմաշ եկաւ իր աշակերտները ձեռնադրելու: Աւագ սակայն Շահէ Արքեպիսկոպոս Գասպարեանի կեանքի տարիները կարճ եղան, երբ Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարած իր առաջին այցելութեան 1935 թուին, Երեւանի իր պանդոկին մէջ յանկարծամահ կ'ըլլար:



Հաստատ կայքին մէջ: Ձեռնադրութեան կը նախագահէր Տ.Տ. Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ, եւ խարտաւիլակութեան պաշտօնը կը կատարէր ձեռնադրեալին ուսուցիչ եւ Եգիպտահայ թեմի Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան, որ նոյն տարին Երուսաղէմի Առաքելական Աթոռի Հայոց Պատրիարք կ'ընտրուէր: Ձեռնադրեալը՝ Շահէ Մ. Վարդապետ Գասպարեան վարկ եւ անուն կերտած էր որպէս վարչագէտ եւ ուսումնական անբասիր հոգեւորական թէ՛ Հալէպի եւ թէ՛ Ամերիկայի մէջ, առաջինին որպէս առաջնորդ, եւ երկրորդին որպէս Պոսթոնի համայնքին հոգեւոր տեսուչ 17 բեղմնաւոր տարիներ: 1930 Հոկտեմբերին կը հրաւիրուէր Բաբգէն Ա Աթոռակից Կաթողիկոսէն Լիբանան մեկնելու եւ ներկայ ըլլալու Դպրեվանքի բացումին եւ ստանձնելու իր վերատեսուչի նոր պաշտօնը:

Շահէ Արքեպիսկոպոս Գասպարեան Դպրեվանքի վերատեսուչի իր հնգամեայ պատասխանատու պաշտօնը պատուով եւ արդիւնքով կատարեց, ընծայելով եկեղեցիին ու ազգին առաջին երախայրիքը՝ Տ. Չարեհ վարդապետ Փայասլեան, յետագային Տ.Տ. Չարեհ Ա. Կաթողիկոս Կիլիկիոյ, եւ Տ. Դերենիկ վարդապետ Փոլատեան, յետագային եպիսկոպոս եւ վերատեսուչ Դպրեվանքին, որոնց ձեռնադրութիւնը ինք կատարեց 1935 թուին:

### Եպիսկոպոսական Ձեռնադրութիւնը

Կիլիկիոյ Աթոռակից Բաբգէն Կաթողիկոս նոր հաստատուած էր Կիլիկեան Աթոռ, եւ Շահէ Մ. Վարդապետ պիտի դառնար իր գործակիցը, ուսուցիչ եւ աշակերտ, երկուքն ալ ազգակիցներ Այնթապէն, որոնք տարիներ գործակցած էին Ամերիկայի թեմէն ներս: Անթիլիաս հասնելուն չորրորդ օրը Բաբգէն Կաթողիկոս կը գրէր Շահէ Մ. Վարդապետին «Հալէպէն սկսելու աշակերտներ հաւաքելու կենսական գործը» ուր նախապէս վարած էր առաջնորդական փոխանորդի պաշտօնը, «մեծ կրեւորութիւն ընծայելով առաջին դասարանի կազմութեան»: Կիլիկիոյ Կաթողիկոսն ու իր Աթոռակիցը լաւագոյն թեկնածուն ընտրած

էին եւ հարկ տեսած գինք եպիսկոպոսացնել 1931-ի Հոգեգալստեան կիրակին՝ Մայիս 24-ին, Անթիլիասի նորած Սրբոց Թարգմանչաց եկեղեցիին կից ընդարձակ փայտաշէն տաղաւար եկեղեցիին մէջ:

Առժամեայ Խորանին հիւսիսային կողմը եօթնաստիճան սեղան մը պէտք էր օժուէր գոր կատարեց Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան, ուր կատարեցին եպիսկոպոսական ձեռնադրութեան առաջին մասը՝ եմիփորոնի տուուչութեամբ: Ձեռնադրութեան առիթով Եգիպտահայ թեմի Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս յատկապէս կուգար նաեւ որպէս ընծայեալին Արմաշական ուսուցիչը, կատարելու համար խարտաւիլակի պաշտօնը, «իր իսկ ձեռքով ներկայացնելով Արմաշական ընտրեալը եւ գիտակցաբար վկայելով անոր արժանաւորութեան մասին»:


Հոգեգալստեան օրը իրենց պաշտօնին եւ աստիճանին համեմատ գեղատաւորութեան բոլորը, կաթողիկոսէն մինչեւ դպիր եւ Ս. Թարգմանչաց եկեղեցիէն թափօրով ուղղուեցան դէպի տաղաւար, ըստ ցուցման Մաշտոցին: Ձեռնադրիչն էր Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսը ընթերակայ ունենալով Եղիշէ Կարոյեան եւ Խաղ Աջապահեան եպիսկոպոսները: Երբ ձեռնադրող Հայրապետը գոչեց, ըսելով «ածէք զդա այսուհետեւ ի վերայ արծուին», իսկոյն ընծայեալը արծուէնչան կաթողիկոսական գորգին վրայ ծնրադիր՝ բարձրաձայն կարդաց իր ուխտագիրը, տուաւ իր հաւատոյ դաւանանքը, յայտարարեց իր ուղղափառութիւնը, պատասխանելով Կաթողիկոսի հարցումներուն:

Շահէ վարդապետին տրուեցաւ եմիփորոն եւ եպիսկոպոսական խոյր, մինչ ճաշու Գիրքի ընթերցումէն առաջ Թորգոմ Արքեպիսկոպոս «արծաթապատ փոքրիկ Աւետարան մը կը դնէր ծնրադիր ընծայեալին ծոծրակէն վար՝ թիկունքին վրայ», բանալով Ղուկասու չորրորդ գլխու «Հոգի Տեառն ի վերայ իմ» համարները: Ձեռնադրիչ Կաթողիկոսը իր ձեռքը կը դնէր Շահէ վարդապետի գլխուն վրայ ու կը կարդար յատուկ աղօթքը, ապա կ'երգէին «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» մաղթերը:

### Օծումը

«Ողջոյն»էն առաջ ծերունի Սահակ Կաթողիկոս որ նոր մտած էր եկեղեցի, ուզեց մասնակցիլ սրբազան ծէսին: Բեմ բարձրանալով օծեց ճակատը նորընծայ Շահէ եպիսկոպոսին «ի նշան իր հայրական սիրոյն, ի գնահատումն իր արժանիքներուն եւ ի գոհացումն իւր իսկ սրտին բաղձանաց»: Բաբգէն Կաթողիկոս օծեց Շահէ եպիսկոպոսին աջ ձեռքին փթամատը, կարդալով եպիսկոպոսական իշխանութեան աղօթքը, տալով անոր եպիսկոպոսական գաւազանը եւ մատանին: Ձեռնադրութեան ուշագրաւ կէտն այն էր որ Արմաշի երիցագոյն աշակերտը Արմաշի կրտսերագոյն իր աշակերտը եպիսկոպոս կը ձեռնադրէր, սերտ կապ մը հաստատելով երկու նոյնանման հաստատութեանց միջեւ, Արմաշի եւ Անթիլիասի դպրեվանքներուն, առաջինին փակումէն ուղիղ 15 տարիներ ետք, եւ երկրորդին բացման վաղորդայնին: Նոյն օր Արմաշի հոգեւորականներէն հինգ հոգի ներկայ էին եպիսկոպոսական ձեռնադրութեան:

Վերատեսուչ Դպրեվանքի 1931 Մայիս 24-ին Կիլիկիոյ նորընտիր Աթոռակից Բաբգէն Ա. Կաթողիկոս Կիլիկեան կը կատարէր իր անդրանիկ եպիսկոպոսական ձեռնադրութիւնը որ եղաւ նաեւ առաջինը Անթիլիասի նորա-



Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

**Ճատ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:**

Նախքան Ձեր ծրագրերուն ու ստատեյթիքներուն համար Ձեզի կառաւարկոյի՝


- 1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
- 2- Ունիք նաեւ թաղման ու յուղարկարարութեան ծառայութիւններ յարմար գիներով

---

Մանրամասնութեան համար դիմել՝

**ISABEL CRISTINA KEMANIAN**  
Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016  
**(818) 284-8754**  
Email: isabel.kemania@sci-us.com





# Հայագգի Յայտնի Մեկնաս Միքայել Արամեանցի Կեանքից

Լոռու մարզպետ Անդրէյ Ղուկասեանը մարզի ու հանրապետութեան բնակչութեան, ինչպէս նաեւ արտերկրեայ գրասաշրջիկների համար շարունակում է բացառապէս Լոռու մարզը, Լոռուայ բնութեան գեղատեսիլ անկիւնները, ամենագոյաբար վայրերը, մշակութային յուշարձանները:

Մարզում այդպիսի արժէքաւոր վայրերից է թիֆլիսահայ մեծանուն գործարար, բարերար Միքայել Արամեանցի շուրջ 120-ամեայ պատմութիւն ունեցող դղեակը՝ յարակից տարածքներով, որը Ախթալա համայնքի հպարտութիւնն է: Այն ընդգրկուած է պատմութեան եւ մշակութի անշարժ յուշարձանների պետական ցուցակում:



Լեոնային Ղարաբաղի Քյաթուկ գիւղում: Մահը՝ 1924 թուականին, թիֆլիսում: Նա եղել է 19-րդ դարի երկրորդ կէսի եւ 20-րդ դարի սկզբի հայ նաւթարդիւնաբերող, բարերար, թիֆլիսի «Ազգային բարեգործական ընկերութեան» հիմնադիր: Միքայել Արամեանցը մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշեանի մտերիմ ընկերն ու գործընկերն էր: Մանթաշեանի հետ Բաքուում գրադուում էր նաւթարդիւնաբերութեամբ եւ առաջիններէն էր, որ իր կապիտալի մեծ մասը տեղափոխեց Բաքու՝ նաւթը երկաթուղով, ցիստեռններով տեղափոխելու համար:

Շուէյցարական ոճով կառուցուած այդ հոյակերտ դղեակը շատ բան է ասում 19-րդ դարավերջում հայկական ազնուական ընտանիքների նիստուկացի, գործունէութեան մասին: Ժամանակին այն ոչ միայն Արամեանցների համար է որպէս հանգստեան տուն ծառայել, այլեւ դարձել է հայ մտաւորականութեան հաւաքատեղի:

Յարական Ռուսաստանի օրօք Արամեանցի տունը Լոռուայ ձորում էլեկտրական լուսաւորութեամբ լուսաւորուող միակ շինութիւնն է եղել, իսկ թեմիսի խաղաղաշուն առաջինն է եղել Հայաստանում:

Խորհրդային տարիներին Արամեանցի տունը վերածուեց է առողջարանային ու հանգստի կենտրոնի՝ վերանուանուելով Ալապերդու «Դեբեդ» տուրիստական հանգրուան: 1992-ին, Հայաստանի արհեստակցական միութիւնների կոնֆեդերացիան այն սեփականութեան իրաւունքով յանձնել է Տուրիզմի եւ էքսկուրսիաների հանրապետական խորհրդին, որն էլ իր հերթին 2005 թուականի Հոկտեմբերի 18-ին այն ոչ համարժէք գումարով վաճառել է ամերիկահայ գործարար Սերոբ Տէր-Պօղոսեանի «Մեթըլ Փրինս» ընկերութեանը: Հետագային, նախորդ տարիների ՀՀ կառավարութեան կողմից քայլեր են ձեռնարկուել անգործութեան մատնուած, բարձրթողի վիճակում գտնուող տարածքը եւ դղեակը չեղ վերցնելու նպատակով, սակայն ապարդիւն:

Լոռու մարզպետի նախաձեռնութեամբ, ՀՀ կառավարութեան նախագիծ է նախապատրաստուում, որով կառավարութեան պահուստային ֆոնդից գումար կը նախատեսուի Արամեանցի դղեակի եւ յարակից տարածքների չափագրում եւ գնահատում կատարելու համար՝ տարածքը գերակալ շահ ձանաչելու նպատակով:

Ա. Ղուկասեանը իր համար բացառապէս այս երբեմնի հրաշագեղ կառուցը՝ յարակից չքնադ բնութեամբ՝ վստահութեամբ, որ կարճ ժամանակ անց հնարաւոր կը լինի այն վերցնել պետական հոգածութեան ներքոյ, ապա նաեւ յանձնել ջանացաւ ներգործների, ովքեր կը կարողանան տարածքը վերածել տուրիստական հանգրուանի:

## Միքայել Արամեանցի Համառոտ Կենսագրութիւն

Հայ գործարար եւ բարերար Միքայել Արամեանցը ծնուել է 1843 թուականի Մայիսի 4-ին,



խրոնիկայի սիւնակում առեւանգման մասին մի կարճ տեղեկատուութիւն է հրատարակել: Այն ժամանակ այսպիսի տեղեկատուութիւնը սովորական բնոյթ էր՝ քառու մէջ գտնուող երկրում, որտեղ յարձակում էին գնացքների ու նաւերի վրայ, մարդկանց բացառապէս կողոպտում փողոցներում, քաղաքացու առեւանգումը որեւէ մէկին չէր զարմացնում: Այս ծանուցումը, սակայն, սովորական քրէական պատմութեան սահմաններից դուրս էր: Բանն այն է, որ յանցագործները առեւանգել էին թիֆլիսի ամենաճանաչուած վաճառականներից մէկին՝ Միքայել Արամեանցին: Հէնց այն Արամեանցին, որի անունով մինչ օրս թիֆլիսի բնակիչները շարունակում են կոչել քաղաքի առաջին հիւանդանոցը:

Առեւանգման դէպքը թերթը նկարագրում է հետեւեալ կերպ.

«Սոյն թուականի Մայիսի 12-ին, երեկոյեան ժամը 8-ի շրջանում, Սերգիի (ներկայիս Մաշաբելի) փողոցում, իր տնից դուրս գալիս վաճառական Արամեանցը յարձակման է ենթարկուել Լերմոնտովի եւ Սերգիի փողոցների խաչմերուկում: Անյայտ անձինք Արամեանցին բռնի նստեցրել են մեքենան եւ նրան տարել անյայտ ուղղութեամբ: Ականատեսները դէպքի վայրում աշխատող ոստիկաններին ասել են, որ առեւանգողների խումբը Արամեանցին գէնքի սպառնալով մեքենայ են նստեցրել: Այս պահի դրութեամբ յայտնի է, որ առեւանգողները երեքն են եղել: Քաղաքացիները փոխանցել են նաեւ մեքենայի համարանիշը՝ 19»:

Միքայել Արամեանցը քաղաքի ամենահարուստ վաճառականներից էր: Նա թիֆլիսի վաճառականների բարձրագոյն համախումբի անդամ էր, ով՝ Դաւիթ Սարաջիշվիլիի, Ալեքսանդր Մանթաշեի (Մանթաշեան), Եւգենի Չեմեյի, Ակակի Խոշտարիայի եւ Մելիք Ազարեանցի հետ միասին քաղաքի զարգացման գործում մեծ ներդրում է ունեցել:

Ծնունդով Ղարաբաղից Միքայել Արամեանցի՝ առեւտրի նկատմամբ հակումը ակնյայտ դարձաւ դեռեւս 15 տարեկանից: Գործի մէջ հմտանալու համար նրան որպէս օգնական ուղարկել են աշխատելու յայտնի առեւտրական թումանեանի մօտ: Վերջինս առեւտրով էր զբաղուում ինչպէս Ղարաբաղում, այնպէս էլ արտասահմանում: Որոշ ժամանակ անց Արամեանցը այնպիսի տաղանդ է ցուցաբերում, որ նրան նշանակում են «Գործընկերութիւն» մասնաւոր ընկերութեան ներկայացուցիչ թաւրիգում: Այս նշանակմանը յաջորդած 4 տարիների

ընթացքում Միքայելը կուտակում է իր առաջին կապիտալը՝ շուրջ 3000 մանաթ: Այն ժամանակ սարդէն բաւականին մեծ կարողութիւն էր համարուում: Իր այս սկզբնական կապիտալով, 1871-ին, Արամեանցը ուղեւորուում է Կովկասի ակտիւ ու ձանաչուած կենտրոն՝ թիֆլիս:

Կարճ ժամանակ անց, ընդամենը 28 տարեկան հասակում, Միքայել Արամեանցն արդէն ունէր իր առաջին միլիոնը: Վաստակած այս դրամագլխով, վաճառականը սկսեց գործուածքների, մետաքսի, բրդի առեւտրով զբաղուել: Ներգրաւուած էր նաեւ շաքարաւազի տարանցիկ առեւտրում՝ Մարսելի, Թաւրիզի ու Թեհրանի միջեւ: Սակայն վաճառականի իրական մեծ հարստութիւնը ձեւաւորուում է նաւթարդիւնաբերութեան ոլորտում ներգրաւուելուց յետոյ:

Արդէն 1884-ին մեկնում է Բաքու, որտեղ արդէն իսկ յայտնի վաճառական Ալեքսանդր Մանթաշեի հետ նաւթային ընկերութիւն է հիմնում, որի բաժնեմասերի 25%-ը պատկանում է Հէնց Միքայել Արամեանցին: Նրա ահագնացող կարողութեան մասշտաբները պատկերացնելու համար, հարկ է նշել, Շարլաքեմի միայն Ապշերոնի թերակղզում ընկերութեանն էր պարտկանում նաւթով հարուստ 173 ակր հողատարածք, նաւթի գործարան, պոմպակայաններ, յատուկ նախագծուած նաւահանգիստ ու բազմաթիւ արհեստանոցներ: Արամեանցի ընկերութիւնը գրասենեակներ է բացել Չիւրախայում, Սալուխայում, Կոստանդնուպոլսում, Ալեքսանդրիայում, Կահիրէում, Պորտ Սաիդում, Մարսելում, Լոնդոնում, Բոմբէյում եւ Շանհայում:

Առեւտրի մէջ գերաջողակ Արամեանցի բախտը, սակայն, անձնական կեանքում չի բերել: Դեռեւս թիֆլիսում բնակուելու ժամանակ, նա սիրահարուում է յայտնի գործարար Շուկոյեանցի 18-ամեայ դստերը՝ Եղիսաբէթին, ում հետ շուտով ամուսնանում եւ նորաստեղծ ընտանիքով տեղափոխուում է Բաքու: Շուտով ինդիւրներ են ծագում կնոջ հաւատարմութեան տեսանկիւնից, եւ Արամեանցի տանը կռիւն ու աղմուկը սովորական երեւոյթ է դառնում: Եղիսաբէթը թեթեւաբար է անգուպ կրն գտնուեց, ով ժամանակի մեծ մասն անց էր կացնում ժամանցային ակումբներում ու ռեստորաններում: Կնոջը սաստեղու նպատակով Միքայելը փորձում է սահմանափակումներ մտցնել, սակայն ապարդիւն:

(Շարունակելի)

## Վրացական Կայք Եջի Յօդուածը

Վրացական «gza.ambebi.ge» կայքը ծաւալուն յօդուած է հրատարակել 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին թիֆլիսում բնակուած հայագգի յայտնի մեկնաս Միքայել Արամեանցի կեանքի որոշ գրուածքների նկարագրութեամբ: Ստորեւ ներկայացնում ենք յօդուածի՝ Ալիք մեդիայի թարգմանութիւնը:

1919 թուականի Մայիսի 14-ին, թիֆլիսի ռուսալեզու «Գրուզիա» թերթը քրէական



# Արտաշէս Թագաւորի Զարսանիքը

Մենք զարմանալիօրէն կենսութեամբ ժողովուրդ ենք եւ ես անկասկածելիօրէն շաւտում եմ դրան: Ոչ մէկի բարբարոսութիւնը կամ բռնութիւնը չեն կարող մարել Զայ ազգի՝ յաւերժ լոյսին ձգտող հօր ոգին

## Յովհաննէս Թումանեան

### ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Կովկասի ձիւնոտ լեռներից այն կողմերը բնակող վայրենի մի ցեղ՝ ալաններ, (յետագային Օսեթներ, որոնք Խորհրդային երկրի փլուզումից յետոյ իրենց նորէն Ալան կոչել) արշաւել են հարաւի երկրներ՝ յափշտակելու նրանց արարումները: Նրանց թագաւորի գլխաւորած զօրքը հասել է Արմինա-Հայաստանի սահմաններ, բանակել Կուր գետի միւս ափի դաշտավայր: Պատերազմ, կռիւ պիտի լինէր: Արմինա-Հայաստանի թագաւոր Արտաշէսը, հայոց բանակի հետեւակի ու այրուձիի գինակիր գունդերը գլխաւորած անցել Կուր գետը՝ ճակատամարտելու ալանների դէմ: Ալանները չգիտէին, որ ում դէմ էին կռուի ելել, ում դէմ էին գէնք ձօնում: Արեւելքում, արիական հօր մի պետութեան հետեւակի ու այրուձիի գունդերը գրոհել են ալանների դիրքեր, մխրճուել նրանց առաջապահ գունդերի շարասիւններ, եռոտանի նիզակներով պատուել թշնամու մարտիկների վահանները, նուրացել էին նրանց շարքերը: Արտաշէսը, նրանց լեռների ձիւնի նման սպիտակաթուր նազաճեմ ձին բազմած, գնում այնտեղը՝ որտեղ մարտի էր ելել նրանց արքայազնը: Արմինա-Հայաստանի թագաւորը կալանել էր արքայազնին, ալանները տանուլ էին տուել մարտը, նրանց թագաւորը նահանջի հրաման տուել: Արտաշէսը կարգադրել է հայոց բանակը անցնէր Կուր գետի իրենց ափ, ինքն էլ արքայազնի վզին անցրած պախուրձէն քաշելով՝ հետեւել իր զօրաբանակին: Ալանաց թագաւորը հաշտութիւն էր խնդրել Արտաշէսից, առաջարկել յաւերժական հաշտութեան դաշնագիր կնքել կողմերի միջեւ եւ որդու համար մեծ փրկագին վճարել: Արտաշէսը մերժում է նրա առաջարկը:



համաձայն, իր դստեր հարսնութեան համար տաղանդներով ոսկի է պահանջել: Արտաշէսը, պահանջած չափի ոսկի ուղարկել ալանների թագաւորին: Գողթան երգիչները իրենց տաղերով երբեք չեն գովերգել գնուած սէրը: Նրանք տաղեր չէին յօրինել կորսուած հարստութեան մասին, սակայն բազում տաղեր կորսուած սիրոյ մասին: Ահա ատոր համար է, որ Սաթենիկի հարսնութիւնը գովերգել են իրենց թագաւորի Սաթենիկին փախցնելու քաջերին վայել դրուագով: Եւ այսպէս՝

Եւ որտեղից կտայ քաջ Արտաշէսը

Զազար-հազարներ եւ բիւր-բիւրներ

Ալանաց կոյս օրիորդիս փոխարէն:

Զեծաւ արի արքայ Արտաշէսը

սելը գեղեցիկ

Եւ հանելով ոսկեղ շիկափոկ պարանը,

Եւ անցնելով գետը, որպէս արծիւ արագաթել,

Եւ ձգելով ոսկեղ շիկափոկ պարանը՝

Գցեց մէջքը Ալանաց օրիորդի,

Եւ շատ ցաւեցրեց մէջքը փափուկ օրիորդի,

Արագ հասցնելով բանակը իր:

Արտաշէս թագաւորը, քաջին վայել սիրանքով է փախցնում իր սիրած աղջկան: Երգիչի տաղում Ալանաց օրիորդի փափուկ մէջքը ցաւացնելու դրուագի յօրինումը՝ նրա նկատմամբ սիրոյ ու քնքշանքի արտայայտութեան դրսեւորումն է, ոչ թէ նրա արքայական ծագման, այլ՝ նրա արքայական գեղեցկութեան ու քնքշութեան համար: Այդպէս գեղեցիկ են գովերգել Արմինա-Հայերի թագաւորի սէրը ալանների արքայադստեր նկատմամբ: Թագաւորները հաշտուում, դաշինք կնքում:

Արտաշէս թագաւորը, իր յաղթ

թեւերի վրայ պահած Ալանաց օրիորդին բազմեցնում սպիտակաթուր նժուգի թամբին, ինքն էլ բարձրանում նժուգին, պատուիրում իր փափկասուն թեւերով պինդ գրկել իրեն, հասկացնում նրան, որ իր նժուգը սլանում է քամու արագութեամբ, եւ որ իրեն տանում է իր ոստան: Թագաւորի զօրական գունդը, Արտաշէսի նժուգի հետ համընթաց, արքայական ճանապարհով սլանում դէպի Արտաշատ ոստան: Սուրհանդակները, ամբողջ երկրով պարտած են տարել, որ Արմինա-Հայաստանի բանակը պարտութեան է մատնել ալաններին, հայոց ար-



քան արծուային թռիչքով անցել Կուր գետի միւս ափ, շիկափոկ պարանով ալանների օրիորդին իր բանակատեղի բերել եւ որ նրան իր ձիուն բազմեցրած արքայական ճանապարհով սլանում դէպի Արտաշատ ոստան:

Շէների, աւանների բազումբազում մարդիկ արգելափակում էին Արտաշէսի ու նրա հետ ձիավարող գունդի ճանապարհը: Իրենց դաշտերի ալուան ծաղիկների փունջեր նետում թագաւորի ու Ալանաց օրիորդի գլխավերեւ: Արորդի Արմինա-Հայ մարդ, դու էլ այնտեղ պիտի լինէիր, որ տեսնէիր հազարհազար գոյների լոյսի հեղեղի տեղատարափը նրանց վրայ: Ժպտում էր Ալանաց օրիորդը, ծիծաղում էր օրիորդը, նայում չորս դին՝ տեսնում կանաչով պնդուած դաշտեր, արեւի ծիծաղով հրդեհուած այգիներ, արեւի խինդ հայոց աշխարհում: Շէների մարդիկ, իրենց թագաւորի ընթացքի ճանապարհների վրայ երկար-երկար կանգուններով ծաղիկներ փռում: Շէների պարման-պարմանուհիները, կթոցներ վեր պահած, թագաւորին ու Ալանաց օրիորդին նուիրում իրենց այգիների արեւաբոյր, աստղափայլ, արեւաբոյր մրգեր: Մաղկած Յորեանի ծովերով անցնող թագաւորի ու Ալանաց օրիորդի երթուղու առաջ են կանգնում շինականներ, պարանոցներից կախ ընկած տոպրակներից բուռերով ոսկեհատիկ ցորեան նետում յատկապէս Ալանաց գեղահարաչ օրիորդի վրայ, մաղթելով, որ նա բարեբախտութիւն բերէր հայոց աշխարհին, բազում որդիներ ու դուստրեր շնորհէր իրենց Արտաշէս թագաւորի Երուանդեան գերդաստանին:

Ազնուագարմ, Հայկագուն Արտաշէս թագաւորի արարած մայր ոստանի դարպասներ տանող մայրուղիին էին խմբուել հազարհազար Արտաշատ ոստանի մարդիկ: Եւ ահա, Ալանաց օրիորդին իր բազմակների մէջ առած Արտաշէս արքան արծուային թռիչքով դէպի Արտաշատ էր ճախրում: Որոտաձայն կանչերով ողջոյնում են նրան, պաղատում կանգնել ոստանի գլխաւոր դարպասի առաջ, Ալանաց օրիորդի գեղադէմ տեսքի հմայքով սքանչանալու: Ոստանի պահակազօրը, բազում մարտերում յաղթանակած դրոշները ծածանելով՝ պատուի կանգնում Արտաշէս թագաւորին: Մեհեանի գլխաւոր քուրմը, արքունիքի ու ոստանի աւագանիների հետ խոնարհում նրան, առաջնորդում դէպի պալատ:

Ձիավար արքան, թամբին բազմած Ալանաց օրիորդ Սաթենիկի հետ կանգնում Արտաշատ ոս-

տանի պալատի հրապարակի բացատ: Այնտեղ խմբուած Արտաշատցիները բարձր կանչերով դիմաւորում նրանց, թմբկահարները բամբեր են զարկում, երգիչների փանդիւններ իրենց յօրինած անուշ տաղերի երգերն են հնչում: Արտաշատ մայր ոստանի խինդի արձակած որոտները դղրդում են Ալանաց թագաւորի Կուր գետի այն կողմի բանակատեղին: Հարթակ ելած պարման-պարմանուհիներ, իրար իրաններ գրկած, շուրջ պարեր բռնում, Ալանաց օրիորդը անձկանօք դիտում պարերը, դէմքին լոյսի ծիծաղ իջնում, նայում չորս բոլորը: Արմինա-Հայերի աշխարհը իրենց երկրի նման չէր, ակները յարում ոստանին հպած արեւաճեմ, ձիւնոտ երեսով լեռանը, աստուածների կողմից նման արարում չէր տեսել: Երկար ժամեր շարունակում էին իրենց աստուածներին ձօնուած փառաբանման տաղեր հնչել, շուրջ պարեր բռնել: Արեւորդի Արմինա-Հայ, եթէ դու էլ ուզում ես նախնիներդ աստուածներին նուիրուած տաղերի, երգերի արթնած կորովից զօրանալ, գնա՛ բու երկրի միակ կանգուն մեհեան, ունկն դիր նրա ատրուշանի կողքին կանգնած քրմուհիների հեթանոսական տաղերի երգերի հնչիւններին, գնա՛ տօնախմբի նախնիներիդ աստուածներ՝ վահագնի, Միհրի, Մայր Անահիտի, Աստղիկի ծննդեան տօները, մասնակից եղիր ցեղիդ զարմից արեւորդիների խրախճանքին, ըմբոշխնի՛ր նախնիներիդ աստուածների պատարագի շարականները, մտի՛ր շուրջպարերի շարքեր: Իսկ եթէ այս Արմինի ու բազում արայորդիների գիրը կարդաս, ինչքա՞ն պիտի հրճուես նախնիներիդ քաջ արարումներով, նրանց ոգեղէն իմաստութեամբ:

Արտաշատի մեհեանի քրմապետ՝ Հրաչեան, յայտարարել է, որ մեհեանական արարողութիւնից յետոյ՝ Սահմի ամսի, Միհրի օրուայ «ճառագայթեալ»-ին, Անահիտի մեհեանում կատարուելու է Արտաշէսի ու Սաթենիկի ամուսնութեան հանդէսի պատարագ, որից յետոյ մեհեանին կից բացատներում՝ երգիչների, նուագածուների մասնակցութեամբ տեղի է ունենալու Արտաշատ ոստանի մարդկանց համաժողովրդային տօնախմբութիւն:

Պալատի դարպասներն են բացուում, Արմինայի սպիտակաթուր նժուգներին բազմած, ծիրանի պարեգօտը իրանին, գոտկատեղից ոսկեհուր սուրը ընկած՝ Արտաշէս թագաւորը ու նրան հետեւող կարմիր բաշերով ձին բազմած՝ լուսնի սպիտակ լոյսի հեղեղով պնդուած



### Մաշկի Համար Վտանգաւոր 5 Մթերք

Մննդակարգին պէտք է հետեւիլ ոչ միայն ամբարն ընթացքին լողափ երթալու ժամանակ լողազգեստ հագնելու համար, այլեւ առողջ մաշկ ունենալու համար, քանի որ այն ամէնը, ինչ կ'ուտենք, ուղղակի կ'ազդէ մեր տեսքին ու մաշկին վրայ: Այդ պատճառով անհրաժեշտ է նուազեցնել հետեւեալ ուտելիքներուն չափը.

1) Կէս չափով պատրաստ ուտելիքներ եւ fast-food: Պահա ծոններու մեծ քանակը, սպիտակ հացը, չիփսերը, տապուած գետնախնձորը, ըմպելիներու եւ աղանդերի մէջ շաքարի պարունակութիւնը կը բարձրացնեն արեան մէջ շաքարի մակարդակը, որուն հետեւանքով կը մեծնայ մաշկային ճարպի արտարումը եւ մաշկին վրայ ցան կը յառաջանայ: Կէս չափով պատրաստ ուտելիքները եւ fast-food-ը կը քայքայեն հիւսուածքները, որոնք պատասխանատու են մաշկի առաձգականութեան վրայ, ի յայտ կու գան վաղաժամ կնճիռներ:

2) Կաթնամթերքներ: Եթէ նկատած էք ձեր դէմքի ստորին հատածի մաշկին տակ գոյացող կորէ-

ակներ, կը նշանակէ աւելի շատ կաթնամթերք կ'օգտագործէք, քան անհրաժեշտ է ձեր մարմնին: Մաշկին վրայ վատ կրնայ ազդել նաեւ պանիրը:

3) Շաքար: Եթէ մաշկի հետ խնդիրներ ունիք, ցաներ առաջանալու հետ խնդիրներ ունիք, որմն շաքարը պէտք է ամբողջութեամբ հանէք ձեր սննդակարգէն:

4) Քաֆէին: Քաֆէին պարունակող ըմպելիները կը ջրազրկեն մաշկը, կը զրկեն կենսական կարեւոր սննդարար նիւթերէ:

Ջրազրկուած մաշկը կը դառնայ քիչ առաձգական, շուտ ի յայտ կու գան կնճիռները: Սակայն ասիկա չի նշանակեր, որ պէտք է հրաժարիք սուրճէն, պարզապէս մի մոռնաք օրական ութ բաժակ ջուր խմել, որպէսզի մաշկը չզրկէք խոնաւութենէն:

5) Աղ: Մննդակարգին մէջ շատ աղը լուրջ վնաս կը հասցնէ ոչ միայն մաշկին, այլ՝ ամբողջ մարմնին: Շատ աղ կը պարունակեն ծուխով եփած ուտելիքները, երշիկեղէնը, մարինադները, միսը:

### Բացասական Մտքերէն Ազատելու Եղանակներ

Ի՞նչ ընել այն կազուն մտքերուն հետ, որոնք կը փճացնեն ձեր կեանքը: Սորվելով «հետեւիլ» ձեր մտքերուն, կրնաք սորվիլ նաեւ ազատիլ անոնցմէ: Քանի մը վարժութիւն, որոնք կ'օգնեն իրականացնելու գայն:

Վերցուցէք թուղթ եւ գրիչ, ձեր առջեւ դրէք որեւէ գեղարուեստական ստեղծագործութիւն եւ, կարդալով առաջին նախադասութիւնը, գայն ձախ ձեռքով գրեցէք թուղթի վրայ: Գրելու ընթացքին բարձրաձայն արտասանեցէք իւրաքանչիւր բառը: Այս վարժութեան իմաստը այն է, որ «չեղէք» ուղեղը, վերջինս զբաղցնէք այնպիսի գործողութեամբ, որուն պարագային անիկա հնարաւորութիւն չ'ունենար այլ բանի մը մասին մտածելու, բացառութեամբ այն խնդիրին, որ այդ պահուն ձեր առջեւ դրուած է:

Ընտրուած նիւթը նախադասութիւն առ նախադասութիւն

պէտք է արտագրել սկիզբի համար մինչեւ 10-15 վայրկեան:

Այնուհետեւ անհրաժեշտ է դադարեցնել եւ տեսնել արդիւնքը, այսինքն՝ հանգիստ նստիլ ու հետեւիլ ձեր մտքերուն: Եթէ կազուն միտքը կը վերադառնայ, հարկ է շարունակել վարժութիւնը (եթէ տուեալ պահուն ժամանակային սահմանափակում չունիք) եւ արտագրել նիւթը եւս 10-15 վայրկեան:

Այս վարժութիւնը պէտք է կատարել այնքան յաճախ, որքան կը նկատէք թէ կեղերոնացած էք վատ մտքի վրայ: Եթէ ձախլիկ էք, ուրեմն գրեցէք, բնականաբար, աջ ձեռքով:

Ժամանակի ընթացքին բացասական մտքերէն ազատելու համար դուք արդէն ոչ մէկ վարժութեան կարիք չէք զգար, այլ կը սորվիք «ալիքը փոխել» ինքնուրոյնաբար: Փորձեցէք եւ ընտրեցէք այն՝ ինչը ձեզի համար աւելի արդիւնաւէտ կը թուի:

### Կիները Ինչո՞ւ Աւելի Երջանիկ են Տղամարդոցմէ

Յայտնի է, որ կիներու եւ տղամարդոց վերաբերմունքը կեանքի հանդէպ տարբեր է: Հետազօտութիւնները ցոյց տուած են, որ կիները, հակառակ բացմագբաղ ըլլալուն, աւելի երջանիկ են, քան՝ տղամարդիկ: Ինչո՞ւ:

Բրիտանացի գիտնականները 10.000 մարդոցմէ խնդրած են գնահատել, թէ որքան գոհ են իրենց կեանքէն: Պարզուած է, որ կիները կեանքին աւելի լաւատեսօրէն կը վերաբերին, քան՝ ուժեղ սեռի ներկայացուցիչները: Տարիքի հետ այս տարբերութիւնը աւելի կը մեծնայ:

### Վերամուտ Իրաքահայերու Ընտանեկան

Շարունակուած էջ 13-էն

ժողովի համար, իսկ աշակերտները նախապէս խմբաւորուած անցան իրենց դասարանները:

Կանաչ եւ բարի ծանապարհ կը մաղթենք մեսրոպախօս այս վարժարանի աշակերտութեան, տնօրէնութեան եւ բոլոր պատասխանատուներուն:

### Եթէ կը Փափաքիք Լուսանկարներու Մէջ Դիւթիչ Տեսք Ունենալ, Ուրեմն Պէտք է Հետեւիք Հետեւեալ Խորհուրդներուն

Մեզմէ շատերը կը փափաքին լուսանկարներու մէջ երեւալ նոյնքան անթերի ու գեղեցիկ, որքան նորաձեւութեան փայլուն ամսագրերու հերոսուհիները:

Տասը արդիւնաւէտ խորհուրդ, որոնց հետեւելով դուք հրաշալի տեսք պիտի ունենաք ձեր բոլոր լուսանկարներուն մէջ:

1) Լուսանկարուելու ժամանակ փորձեցէք ո՛չ թէ պատկերին կեղերոնը ըլլալ, այլ՝ մէկ-երկու քայլ աջ կամ ձախ:

2) Ձեր մէջը լուսանկարչական գործիքին դարձնելով՝ շրջեցէք գլուխը:

3. Ոտքերը մի դնէք մէկ գիծի վրայ, աւելի լաւ է մէկ ոտքը դնել միւսէն առջեւ, իսկ ծանրութիւնը՝ ետեւի ոտքին վրայ:

4) Քաշեցէք փորը, ուղղեցէք ուսերը, գլուխը բարձր պահեցէք, բայց աշխատեցէք չլարուիլ եւ, ամենակարեւորը, մի մոռնաք շնչել:

5) Լուսանկարիչին խնդրեցէք կթած նստիլ կամ նկարել քիչ մը ցածէն. այս պարագային, ոտքերը պիտի երեւին երկար ու սլացիկ:

6) Եթէ կը նկարուիք նստած, քիչ մը ծրեցէք եւ ոտքերը դրէք թաթերուն ծայրերը. այս պարա-

գային նոյնպէս անոնք երկար պիտի երեւին:

7) Լուսանկարուեցէք ունէ մէկուն կամ որեւէ բանի կողքին, մի խուսափիք օգտուելէ չափերու տեսողական խաբկանքի հնարաւորութիւններէն. անգամ կէս քայլ ետ կանգնելով, դուք պիտի երեւիք երկու չափ փոքր:

8) Մի սպասէք մինչեւ «Թռչնա-կը դուրս թռչի», թուլցէք, ժպտեցէք, ձեզի անկաշկանդ զգացէք:

9) Լուսանկարիչին խնդրեցէք նոյն նկարը նկարել քանի մը անգամ: Փորձարկումներ ըրէք, փոխեցէք կեցուածքը, դէմքի արտայայտութիւնը, հայեացքը, ժպիտը: Այդ պարագային հնարաւորութիւն պիտի ունենաք ընտրելու ամենայաջող նկարը:

10) Որպէսզի լուսանկարչական գործիքը անակնկալ չմատուցէ ձեզի, երբեմն փորձեր ըրէք հայելիին առջեւ, նայեցէք թէ որ դիրքը ձեզի աւելի հաճելի կը թուի եւ փորձեցէք գործիքին առջեւ ընդունիլ այդ նոյն կեցուածքը:

Սակայն ամենազլխաւորը՝ եղէք այնպիսին, ինչպէս կաք եւ փորձեցէք լուսանկարին հաղորդել ձեր ներքին կենսուժը:

### Մտքեր եւ Խորհուրդներ Բոլորին Համար

- Եթէ մտադրած ես որեւէ բան ընել, երբեք մի հարցնէր հետեւանքներուն մասին: Այլապէս ուզածդ երբեք չես ընէր:

(Հրիխ Մարիա Ռեմարք)

- Ըրէք այն, ինչ ձեզ երջանիկ կը դարձնէ: Շփուեցէք անոր հետ, որ կը ստիպէ ձեզ ժպտալ: Մի ծաղեցէք, սիրեցէք, եւ պիտի ապրիք... Մի անհանգստանաք ժամանակի եւ ուրիշներու կարծիքներուն համար, եւ մի մտածէք, թէ ինչ պիտի ըլլայ յետոյ... «Յետոյ» կրնայ եւ չըլլալ...

- Ով իր ուրախութիւնը չի կիսեր բարեկամներու հետ, դժբախտութեան մէջ միտակ կը մնայ:

(Եզոփոս)  
- Երբ մարդ աղմուկին կը վարժուի, լուսթիւններ կ'ըլլան, որոնք կ'արթնան գինք:

(Անրի վեռնոյ)

- Միջին մարդը մտահոգուած է այն բանով, թէ ինչպէս սպաննէ ժամանակը, իսկ տաղանդաւոր մարդը կը ձգտի ժամանակը օգտագործել...:

(Արթուր Շոփենհաուզը)

- Մարդոց իմաստութիւնը համեմատական է ո՛չ թէ անոնց փորձին, այլ՝ անիկա ձեռք բերելու անոնց ընդունակութեան:

(Պեռնարտ Շօ)  
Պատրաստեց՝ ՆԱԻՆԷ Ն.

### Թրամփ-Փաշինեան Հանդիպումի Մասին

Շարունակուած էջ 1-էն

միտում եւ կամ մերժում՝ որեւէ երկրի հանդէպ:

Այս կարգը գոյութիւն ունեցած է անցեալից Ամերիկայի բոլոր նախագահներու պարագային: Ի՞նչ կը վերաբերի Ամերիկայի, երբ Սպիտակ Տան բնակիչը Տանուտ Թրամփն է, Ամերիկայի արտաքին քաղաքական յարաբերութիւններէն ներս կը տիրէ խառնաշփոթ իրավիճակ: Նախագահ Թրամփ մեծ հետաքրքրութիւն չունի միջազգային անցուդարձերու նկատմամբ, ի բացառեալ մի քանի երկիրներէն՝ Իսրայիլ, Իրան, Հիւսիսային Քորեա, Չինաստան, որոնք հետ մաքսային պատերազմի մէջ է ու այդքան: Սպիտակ Տան նախկին ու ներկայ պաշտօնեաներ կը վկայեն, որ Թրամփ չի կարողար իրեն ներկայացուած միջազգային իրադարձութիւններու նկատմամբ անէմօթեայ տեղեկագիրները: Ան իր լուրերը կը քաղէ հեռատեսիլի հաղորդումներէն եւ ոչ թէ իր խորհրդակցութիւններէն եւ կամ մասնագետներէ: Ան հազիւ օրակապ երկու ժամ կ'անցնէ իր գրասենեակէն ներս եւ ապա կը քաշուի Սպիտակ Տան իր բնակարանի բաժինը, ուր ժամանակը կ'անցնէ FOX-ի, CNN-ի,

MSNBC-ի վրայ տեսածներուն ու լսածներուն մասին «Թիւիթթըրով» գրառումներ կատարելով եւ կամ ծանօթներու եւ բարեկամներու հետ հեռաձայնային խօսակցութիւն ունենալով:

Տակաւին այս օրերուն ան պաշտօնէն հեռացուց իր երրորդ Ազգային Ապահովութեան Խորհրդակալը՝ Դոն Պոլթոնը, որ ի դէպ Հայաստան այցելած ամենաբարձր պաշտօնեան էր քաշեայ յեղափոխութենէն ետք:

Ինչպէս ներքին հարցերու պարագային, նոյնպէս ալ արտաքին քաղաքականութեան մէջ ներկայիս կը տիրէ անբնական ու քառասյին վիճակ: Թրամփի համար ամէն ինչ կը կրէ ցուցադրական բնոյթ, գլխաւորաբար ուղղուած իր վերընտրութիւնը ապահովելու:

Այս կացութեան մէջ ակնկալել, որ կրնայ Տեղի ունենալ Թրամփ-Փաշինեան լուրջ հանդիպում եւ քննարկում, խիստ չափազանցուած է: Նման հանդիպում շատ աւելի հաւանական է 2020-ի նախագահական ընտրութիւններէն ետք, եթէ Ամերիկայի Դոն Պոլթոնը նախագահ: Մինչ այդ Թրամփ-Փաշինեան հանդիպումի մասին խօսիլը անիմաստ է:

«ՄԱՍԻՍ»



**ՍԱՐՉԱԿԱՆ**

**Եւրո-2020. Հայաստանի Հաւաքականը  
Գեղեցիկ ու Արժանի Յաղթանակ Տօնեց  
Պոսնիացիների Դէմ**



ԵՒՐՕ-2020-ի որակաւորման փուլի 6-րդ տուրում Հայաստանի հաւաքականը Վ.Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտում 4:2 հաշիւով պարտութեան մատնեց Պոսնիա եւ Հերցեգովինայի ընտրանուն:

Խաղի հաշիւը 3-րդ րոպէին բացեց Հենրիխ Մխիթարեանը: 13-րդ րոպէին պատասխան գնդակը խփեց Էդին Զեկոն: Երկրորդ կէսում մեր թիմը շատ լաւ մեկնարկեց եւ արդէն 66-րդ րոպէին Մխիթարեանը եւս մէկ գնդակ ուղարկեց մրցակցի դարպասն ու իր հաշուին դուբլ գրանցեց: 4 րոպէ անց հաշիւը կրկին հաւասարուեց. աչքի ընկաւ Ամեր Գոյսկը: Չնայած այս ամէնին մեր տղաները շարունակեցին նոյն ոգով պայքարել եւ 77-րդ րոպէին Մխիթարեանի ձախ եզրից կատարած փոխանցումից յետոյ յաղթական կոլի հեղինակ դարձաւ Յովհաննէս Համբարձումեանը: Աւելացրած ժամանակում Մխիթարեանի հարուածից յետոյ հիւրերի կազմում ինքնակոլի հեցինակ դարձաւ Լոնկարը:

Հարկ է նշել, որ հիւսնայի հանդիպում անցկացրեց նաեւ մեր դարպասապահ Արամ Հայրապետեանը: Չնայած, որ երկու գնդակ բաց թողեց, սակայն մի քանի դրուագներում անհաւանական սեյվեր կատարեց: Այսպիսով, այս յաղթանակից յետոյ Հայաստանը վաստակեց 9 միաւոր եւ շրջանցելով Պոսնիային բարձրացաւ 3-րդ հորիզոնական:

Հայաստանի եւ Պոսնիայի հաւաքականները հանդիպում էին չորրորդ անգամ: Նախորդ երեք հանդիպումներում յաղթել էին պոսնիացիները՝ 2010թ. աշխարհի առաջնութեան ընտրական փուլում 4:1 եւ 2:0 հաշուով, իսկ Եւրո-2020-ի ընտրական փուլի առաջին տուրում՝ 2:1 հաշուով:

**«Բարսելոնա»-ն Մեսսիին Ցմահ  
Պայմանագիր Կ'առաջարկի**

«Բարսելոնա»-ն մտադիր չէ բաժանուել յարձակուող Լիոնել Մեսսիից: Այս մասին յայտնում է Mundo Deportivo-ն:

32-ամեայ իսպանացի գործող պայմանագրի ժամկէտը կատարունական ակումբի հետ լրանում է 2021 թուականին:

Համաձայնագրում կէտ կայ, ըստ որի՝ արժենտինացին կարող է այն խզել ամէն տարուա Յունիսի 30-ին:

«Կապտանուանգու չններ»-ը ցանկանում են թիմում պահել «Ոսկէ գնդակ»-ի հնգակի դափնեկրին՝ նրան առաջարկելով ցմահ պայմանագիր: Կողմերը դեռեւս չեն սկսել բանակցութիւնները, սակայն «Բարսա»-ի նախագահ Ժոզեպ Բարտոմեոն եւ Խորխե Մեսսին՝ Մեսսիի հայրը, անընդհատ կապի մէջ են:

**Վենգեր. Սալահը Կարող է Հասնել Մեսսիին, Եթէ ...**

Լոնտոնի «Արսենալի» նախկին գլխաւոր մարզիչ Արսէն Վենգերը beIN Sports-ի հետ զրոյցում խօսել է «Լիվերպոլի» յարձակուող Մոհամեդ Սալահի մասին՝ համեմատելով նրան Լիոնել Մեսսիի հետ:

«Սալահը նման է Մեսսիին: Կարծում եմ՝ գրոհի եզրափակիչ փուլում նա Մեսսիից վատը չէ: Մոհամեդը կարողանում է աւարտել գրոհները ու դա անում է Մեսսիից ոչ այդքան վատ: Բայց այդ ամէնի հետ մէկտեղ նա մի փոքր եսասէր է դարպասի առաջ: Եթէ նա աւելի քիչ եսասէր լինի գրոհի եզրափակիչ փուլում, կարող է հաւասարուել Մեսսիին», - Վենգերի խօսքերն է մէջբերում Goal-ը:



Անգլիայի Պրեմիեր լիգայի ընթացիկ առաջնութիւնում Սալահը մասնակցել է 4 հանդիպման, որոնցում 3 կոլ է խփել ու 2 կոլային փոխանցում է կատարել:

Յիշեցնենք, որ Լիոնել Մեսսին վերականգնում է վնասուածքից: Արժենթինացի յարձակուողը նոր մեկնարկած մրցաշրջանում դեռեւս ոչ մի հանդիպման չի մասնակցել:

**US OPEN  
Ռաֆայէլ Նադալը Նուաճեց 19-րդ Տիտղոսը  
«Մեծ Սաղաւարտի» Մրցաշարերում**

Ռաֆայէլ Նադալը նուաճեց 19-րդ տիտղոսը «Մեծ սաղաւարտի» մրցաշարերում: Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնութեան եզրափակիչում սպանացի թենիստը մրցեց ուսաստանցի Դանիէլ Մեդվեդեւի հետ, որը պարտութիւն կրեց 5:7, 3:6, 7:5, 6:4, 4:6 հաշուով: Պայքարը տեւեց 4 ժամ 50 րոպէ:

Ռուս թենիսիստները «Մեծ սաղաւարտի» մրցաշարերի եզրափակիչ դուբլ չէին եկել 2005 թուականից, երբ Մարատ Սաֆինը Աւստրալիայի բաց առաջնութեան եզրափակիչում յաղթեց շուեյցարացի Ռոջեր Ֆեդերերին:



**Բիանկա Անդրեսկուն Յաղթեց Սերենա  
Ուիլիամսին եւ Առաջին Անգամ Նուաճեց  
Տիտղոսը**

Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնութեան կանանց մենախաղի ախոյեանի կոչումը նուաճեց Գանատայի ներկայացուցիչ Բիանկա Անդրեսկուն, որն այս մրցաշարում ունէր 15-րդ համար:

Եզրափակիչում 19-ամեայ մարզուհին երկու սեթում յաղթանակ տարաւ աշխարհի նախկին առաջին ռակետ Սերենա Ուիլիամսին նկատմամբ՝ 6:3, 7:5: Պայքարը տեւեց 1 ժամ 41 րոպէ:

Անդրեսկունի լաւագոյն արդիւնքը նախկինում եղել էր այս տարուայ Աւստրալիայի եւ Ֆրանսայի բաց առաջնութիւններում երկրորդ շրջանը: Սերենա Ուիլիամսը US Open-ի վեցակի ախոյեան է:



**UFC 242. Նուրմագոմեդովը Պաշտպանեց  
Ախոյեանական Տիտղոսը**

Խառը մենամարտերի թեթեւ քաշային կարգում UFC-ի ախոյեան, ուսաստանցի Խաբիբ Նուրմագոմեդովը Աբու Դաբիում մենամարտեց ամերիկացի Դասիթի Պուարէի հետ:

30-ամեայ Նուրմագոմեդովը պաշտպանեց թեթեւ քաշային կարգում ախոյեանի տիտղոսը: Նա երրորդ ռաունդում խեղդող հնարքով ստիպեց յանձնուել մրցակցին:

Նուրմագոմեդովը երկրորդ անգամ յաջողութեամբ պաշտպանեց տիտղոսը՝ խառը մենամարտերում յաղթական շարքը հասցնելով 28 մենամարտի: Պորլեն զրկուեց ժամանակաւոր ախոյեանի գօտուց:



**Ռոնալդուն՝ Իտալիայի Առաջնութեան  
Ամենաարագ Յարձակուող**

Թուրինի «Եուլենտուսի» եւ Պորտուգալիայի ազգային հաւաքականի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն Իտալիայի առաջնութեան ընթացիկ մրցաշրջանում ամենաարագ յարձակուողն է, յայտնում է Football Italia-ն:

Իտալիայի առաջնութիւնում հանդէս եկող յարձակուողներից միայն Ռոնալդուն է յաջողուել գրանցել 34.62 կմ/ժ արագութիւն: Այս ցուցանիշով Ռոնալդուն Ա Սերիայում հետ է մնում միայն «Նապոլիի» պաշտպան Կոստաս Մանուլասից, որը գրանցել է 35.41 կմ/ժ արագութիւն:

Յիշեցնենք, որ 34-ամեայ Ռոնալդուն «Բարսելոնայի» առաջատար Լիոնել Մեսսիի եւ «Լիվերպոլի» պաշտպան Վիրջիլ վան Դեյկի հետ յաւակնում է աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստի կոչմանը: Լաւագոյն ֆուտպոլիստի անունը յայտնի կը դառնայ Սեպտեմբերի 23-ին:

**Ֆրանչեսկո Տոտի.  
«Մխիթարեանը Լաւ Համալրում է»**

Հենրիխ Մխիթարեանի՝ «Ռոմա» տեղափոխութեան մասին Sky Sport Italia-ի եթերում խօսել է ակումբի լեգենդ Ֆրանչեսկո Տոտին:

«Մխիթարեանը կարող է իր հետ բերել թէ՛ որակ, թէ՛ քանակ, ուստի սա լաւ տեղափոխութիւն է: Նա վերջին 2 տարիներին մշտական խաղաժամանակ չի ունեցել, բայց յոստով եմ, որ «Ռոմայում» կը զգայ իրեն ինչպէս տանը: Երկրպագուները կը գնահատեն նրա որակները, որովհետեւ նա լաւ տեխնիկա ունի եւ լցուած է իրեն դրսեւորելու ցանկութեամբ», - ասել է Ֆրանչեսկո Տոտին:



ՄԱՅԱՁԴ



ՍԵՂՐԱԿ ԳՕՓՈՒՇԵԱՆ (1945-2019)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ եղբոր՝ Սեղրակ Գօփուշեանի մահը որ պատահեցաւ Երեքշաբթի 3 Սեպտեմբեր, 2019ի առաւօտեան ժամը 3:20ին փաստինայի Huntington հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 14 Սեպտեմբեր, 2019ին առաւօտեան ժամը 11:00ին փաստինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ 2215 E. Colorado Blvd., Pasadena CA 91107, ապա թաղման կարգը Forest Lawn, Hollywood Hills գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Տիկ. Մէկի Գօփուշեան Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Էլիզ Բարսեղեան եւ զաւակները Նաթալի եւ Բարսեղ Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Մանուէլ եւ Մէկի Գօփուշեան եւ զաւակը Մոնթէ Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Մայրանուշ Սողոմոնեան եւ զաւակները Տիկ. Գարմէն Գօփուշեան եւ զաւակները Քոյրը՝ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհնյ. եւ երեցկին Արաքսի Թաթուլեան եւ զաւակները Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Անահիտ Խպոյեան եւ զաւակները Քենին՝ Մարօ Զաթալպաշեան Աներորդին՝ Եսայի Զաթալպաշեան Աներորդին՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուլու Զաթալպաշեան եւ զաւակը Եւ համայն Գօփուշեան, Բարսեղեան, Սողոմոնեան, Թաթուլեան, Մաթոսեան, Գրգիշեան, Զաթալպաշեան, Շիրտմեան ընտանիքները համայն հարազատներն ու բարեկամները:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՅՈՎՍԷՓ ՄՈՒԹԱՅՆԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

Սիրիայից Նոր Հոսք Է Սպասուում Հայաստան

Շարունակուած էջ 6-էն

«Պատկերը ամէն տարի է փոխուում, հաշուի առնելով մահացութիւնների, ինչպէս նաեւ երկիրը լքելու դէպքերը: Ի դէպ, թուրքը չեն թարմացուել 2013 թուականից: Յստակ թիւ ունենալուց յետոյ, բնակարանային ծրագիր կը ներկայացնեն կառավարութիւն: 2019 թուականին բիւջետային յայտ էինք ներկայացրել 11 ծայրայեղ վատթար կացարաններում բնակուող 69 ընտանիքների համար, սակայն մերժուեցին: Ընդհանուր առմամբ, պահանջուում է 9 միլիարդի ֆինանսաւորում, որպէսզի առաջնային բնակարանային խնդիր ունեցող փախստականների հարցը լուծուի, այս մասշտաբի ծրագրերը մէկ-երկու օրում չեն արուում, մանրամասն վերլուծութիւններ են պէտք»:

Եթէ ԱՄՆ, Գանատա, կամ եւրոպական որոշ երկրներ մեկնած

փախստականների եւ որոշ աշխատանքային միգրանտների առաջին քայլերն ուղղուած են քաղաքացիութիւն ստանալուն եւ հետեւաբար բարեկեցիկ կեանքով ապրելուն, ապա մեր երկրում պատկերն այլ է: Հայաստանից փախստականներն այլ երկիր տեղափոխուելու եւ որոշ դէպքերում քաղաքացիութիւնից խուսափելու հիմնախնդիրներից մէկն էլ կիսապատերազմական իրավիճակն է: Նրանց խօսքով, իրենք փախել են պատերազմից, իսկ այստեղ՝ բանակում ապահով չէ իրենց տղաների համար: Փախստականների եւ ապաստան հայցողների թիւը Հայաստանում ըստ երկրների, համաձայն ՄԱԿ ՓՄԳ-ի տրամադրած տեղեկատուութեան՝ 2019 թ. Ապրիլ ամսուայ դրութեամբ առաջին տեղում է եղել Սիրիան՝ 14713 մարդ, այնուհետեւ Ադրբեջանը՝ 1391 մարդ, Իրաքը՝ 1072 մարդ,...

«ԼՐԱԳԻՐ»

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Արտաշէս Թագաւորի Հարսանիքը

Շարունակուած էջ 16-էն

Ալանաց օրիորդը, արքունիքի աւագանիի ուղեկցութեամբ ձիաւարում են դէպի Անահիտի մեհեան: Քրմապետ Հրաչեան, մեհեանի նախամուտքին դիմաւորում նրանց: Քուրմերի ու քրմուհիների առանձին դասակներ, Արտաշէսին ու Ալանաց օրիորդին թեւերի վրայ պահած տանում մեհեանի Անահիտի բազինի առաջ: Քուրմերը ու քրմուհիները շարքերով կանգնում նրանց կողքին: Արքունիքի աւագանին, հանդիսաւոր երթով մտնում մեհեան:

Այսպէս է խօսում Քրմապետը.

-Այսօր, Արմինա-Հայաստանի Արտաշէս Թագաւորի ամուսնութեան պատարագի հանդէսն է: Մայր Անահիտի բազինի առաջ Արտաշէսին ու Ալանաց օրիորդ Սաթենիկին հայոց աստուածների հաճութեամբ օծելու եմ որպէս այր ու կին: «Ճառագայթեալ»-ի ժամին գնացել Սօսեաց անտառակ, հայոց աստուածների պատգամը լսելու: Արա ու Միհր աստուածները պատուիրեցին, որ երկրի թագաւորը ամէն «այգ»-ին աստուածներից հայցէր կրակի ու լոյսի յարատեւութիւնը: Քուրմ, կարմիր կրակով լիքը ատրուշանը բեր Անահիտի բազինի առաջ, բուրձառում նրա կրակը լցրո՛ւ, նրա լոյսը ցանի՛ր թագաւորի ու Ալանաց օրիորդի երեսներին, կարգն է այդպէս: Հայոց «Հայք»-երի Արտաշէս Թագաւոր, երդուի՛ր մայր Անահիտին, երդուի՛ր Արմինա-Հայաստան աշխարհին, որ անսասան կը պահես հայոց երկիրը: Քրմուհիներ, Արմինա-Հայաստանի աստուածներին սպասարկող քուրմերի յօրինած ամուսնութեան հանդէսների տաղեր հնչէ՛ք: Արտաշէս Թագաւոր, հա-

յոց Արա Գեղեցիկ Թագաւորի նման սիրի՛ր Արմինա-Հայաստան երկիր հարս բերած Ալանաց օրիորդ Սաթենիկին, կուուի ելի՛ր նրա ու նրա պատուի համար: Մտի՛ր մեհեանները քու աստուածների, ծնրադրի՛ր նրանց տիեզերական իմաստութեանը, որ պահապան լինէին Արմինա-Հայաստանին: Նար Ծովինար աստուածուհին անձրեւ տեղար երկրի արտերին, այգիներին, բարգաւաճում ու առատութիւն լինի երկրում: Ալանաց օրիորդ Սաթենիկ, պաշտամունք նուիրի՛ր Արմինա երկրի աստուածներին, երկրպագի՛ր Մայր Անահիտի բազինին, երդուի՛ր, որ կը հայանաս, բազում որդիներ ու դուստրեր կը նուիրես Արտաշէս Թագաւորին, որ յարատեւի գարմը երուանդունի նախնիների տոհմի: Քուրմեր ու քրմուհիներ, հրալից ատրուշանի կարմիր լոյսով այր ու կին ամուսիններ եմ օծում Արտաշէսին ու Սաթենիկին, Ալանաց օրիորդին յայտարարում եմ՝ Ամինա-Հայաստանի Սաթենիկ Թագուհի, աղամանդակու ալս թագն եմ դնում նրա ճակատին: Մեհեանի ու հրապարակի մարդիկ, միաբերան երգենք Վահագնի ծնունդի տաղը:

Երկնում էր երկիցքը, Երկնում էր երկիրը, Երկնում էր ծովը ծիրանի Տաղի երգի բազմախումբ հնչիւններից դողում էր մեհեանը, հովերը նրա հնչիւնները տանում երկրի շէնքը, արտերի հասկերը օրօր անում, հասնում Արարատի ձերմակ գագաթ, որտեղ հայոց աստուածները նաեւ բարձրաձայնում Վահագնի ծնունդի տաղը: Փառաւորեմ քեզ Արմինա-Հայաստան արարչական երկիր ...:

(Շարունակելի)

Փաստեմայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ



Շարունակուած էջ 8-էն

չաց տօն, Ս. Հաղորդութիւն եւ Կաղանդ, Բարեկենդան, Վարդանաց, Տեառնընդառաջ, Ս. Հաղորդութիւն եւ Զատիկ, Հայոց Յեղասպանութեան ռզեկոչում, Բարեկենդան, Համահայկական Հիմնադրամի տարեկան դրամահաւաքի մասնակցորդութիւն եւ Տարեվերջի հանդէս, ուր աշակերտը կը հնչեցնէ երգն ու պարը բեմին վրայ: Վարժարանը նաեւ ունի ծառատունկի յատուկ ծրագիր, որուն միջոցաւ հայ աշակերտը կը գիտակցի Հայաստանի մէջ ծառ տնկելու անհրաժեշտութեան գեղեցիկ գաղափարին:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ դպրոցի երգիքին տակ հայ աշակերտները կը կերտեն հայկական դիմագիծն ու ինքնութիւնը վերականգնող միջավայր, մշակելով բարեկամութիւններ եւ ընկերութիւններ, որոնք կ'օգնեն իրենց հետագայ կեանքին ուղին գծելու եւ ձուլման եւ օտարացման վտանգը նուազեցնելու եւ ինչու չէ՞ փարատելու: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Շաբթօրեայ վարժարան՝ Հայութեան Փարոս, Հայապահպանման ու Հայակերտման դարբնոց: Յաջողութիւն քու սրբազան առաքինութեան:



**PUBLIC MEETING WITH PRIME MINISTER OF ARMENIA**  
**ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ**



**SUNDAY SEPTEMBER 22, 2019 AT 2:00 PM**  
**ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 22, 2019 AT 2:00 PM**

**ԳՐԱՆԴ ՓԱՐԶ**

**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻԾ**

**GRAND PARK AT**

**LOS ANGELES CITY HALL**

**200 N. SPRING STREET LOS ANGELES, CA 90012**

**CO-ORGANIZED BY**

**CONSULATE GENERAL OF ARMENIA  
AD-HOC COMMITTEE OF ARMENIAN ORGANIZATIONS  
MAYOR ERIC GARCETTI  
COUNCILMEMBER PAUL KREKORIAN  
LA COUNTY SUPERVISORS KATHRYN BARGER & HILDA L. SOLIS**

**ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ**

**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԽՈՒՄ**

**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԷՐԻԿ ԳԱՐՍԵԹԻ**

**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՓՈԼ ԿՐԵԿՈՐԻԱՆ**

**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԱՐԶԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ ՔԵԹՐԻՆ ԲԱՐԳԵՐ և ՀԻԼԴԱ ՍՈԼԻՍ**